

ALPHABET

ՄԱՆԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՄՍԵՅԻՐ

D E U T E R O S T O M A

No. 5

1882

ጥሪ ስም

INTERNATIONAL JOURNAL OF

ՅԵՐԵՆԳՐՈՒԹԵԱՆ, ԿԱՂԴԻՑ—ԱԵՏ, Հայրապետի մահուան ամիսը։—ԿԱՌ-
ՏԱՆԵԱՆ—ԱԵՐ, Մայրերի կրթութիւնն ու դատախարակութիւնը [էջ 2-ը—2-ի—է]։
—Ս. ՉԱՒԱԿԱՆԻԱՆ—Ազգային պատմութիւնը, առարկան ուսումնարանում՝
[էջ 2-ը—2-ի—է]։—Փ. ԱՐԳԻՆԵԱՆ—Սղեմէի մանկավարժական մօքերը։
—Յ. ՉԻՅԱՆԵԱՆ—Տնարարութեան ռաւմարաներ։—Ս. ՄԱԿԻՆԵԱՆ—
Շնորհակալութիւն պ. Բանասերեւորին։—ՄԷՆԱԿԱՆ, ԲԼԺԻՆ՝ ա) Ճազո
վրդական հին դրոշմը։ Բ) Մարմանադրական խաղ։ Գ) Գերմար ընդու խեղ-
մօքը։—Զ. ԵՒՐՃԱԼԻ, ՀԱՆԵԼՔԻՆԻ, ԽՆԻՐՆԻ, —ՅԱՅՆ-
ՐԱՐՈՒԹԵԱՆԻՆ՝

ॐ नमो भगवते वासुदेवाय

ՄԻԿՈՍԿՈՓԱԿԱՆ ԵՐԿՐԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՐԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՐԱՆՈՒՄՆԵՐԻ

Եռաշիկայ 1883 թուականին
„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ

Կը հրատարակուի նոյն դիրքով և ուղղութեամբ.

Տարեկան գինն է 10 ռ., կէս տարվան 6 ռ.:

Թիֆլիզում կարելի է ստորագրվել I) Խմբագրատանը, II) պ. Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցում, III) պ. Շահվերդեանցի պալիեսնում, և IV) «Կովկաս» հիւրանոցի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում:

Օտարաքաղաքացոյ համար հասցէն է՝ Вѣ редакцію газеты „Меру Аѣастани“. կամ Rédaction du Journal arménien „Meghou Haïastani“, Tiflis.

Եռաշիկայ 1883 թուին
„ԱՐԶԱԳԱՆԻ“

Շաբաթաթերթը կը հրատարակուի միեւնոյն դիրքով և պրօգրամայով.

Թէև խմբագրութիւնը մտադիր էր շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը հինգ ռուբլի նշանակել, բայց աչքի առաջ ունենալով ցենզուրային օրէնքի 12, 13 և 15 յօդուածները, որոնց զօրութեամբ հինգ ռուբլի բաժանորդագին ունեցող թերթերը հասարակական հարցերը քննելու արտօնութեան կողմից սահմանափակութեան են թարկվում, խմբագրութիւնը «Արձագանքի» տարեկան բաժանորդագինը թողնում է 7 ռ.


Կէս տարուայ բաժանորդագինն է 4 ռ.

Արձագանքի բաժանորդները իրաւունք ունին ձրիապէս ստանալ երկու ռուբլու գրքեր, ուղարկելով 20 կոպէկի փոստի մարկա. Թիֆլիսում կարելի է ստորագրուել խմբագրատանը կամ Կենտրոնական գրավաճառանոցում.

Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисѣ, въ Редацію газеты „Арцаганкѣ“. Արտասահմանի յ—Tiflis. Rédaction du journal arménien «Ardzagank.»



Դեկտեմբերի 6-ին ԳԼՅՈՐԳ Դ. Նապ-
րազոյն Պատրիարք և Կաթողիկոսն ամե-
նայն Հայոց հանդեսու ՚ի Տէր:



Դեկտեմբերի 6-ին երեկոյեան ժամը 10-ին Տփլիսայ Վանաց Մայր Եկեղեցւոյ զանգակի տխուր հնչիւնը տուեց Թիֆլիսի Հայերին Հայ ազգի ինամատար Հօր և Հովուապետի մահուան գոյժը:

Վարժարանը, իբրև մանկավարժական մի թերթ, ուսումնարանական խնդիրը սերտ կապուած տեսնելով՝ ի Տէր Հանգուցեալ Տէր ԳԵՌԳ Դ. Ընդհանրական Կաթողիկոսի կեանքի և գործունէութեան հետ, սեպուհ պարտք է զգում իրան, թէև սուղ տողերով, սակայն և այնպէս երևան հանել իւր էջերի մէջ երջանկայիշատակ Հայրապետի համառօտ կենսագրական ցուցակը, որը քաղել է հարազատ աղբիւրներից:

Տէր Գէորգ Դ. ծնաւ Բուրսայում 1812 թուին: 22 տարեկան հասկում՝ այն է 1834 թուին ձեռնադրվում է վարդապետ, Գրիգոր ծննդեան անունը Գէորգ փոխարկելով: 1847 թուին հրաւիրւում է Ս. Էջմիածին և Ներսէս Ն. երջանկայիշատակ կաթողիկոսից Եպիսկոպոս ձեռնադրուելով՝ մեկնում է ի Բուրսայ. ուր քսան և երկու տարի առաջնորդական ծանր պաշտօնը վարելով՝ շատ բարեկարգութիւններ է անում, որոց մէջ նշանաւորներից մինն ևս այն է, որ տեսնելով Բուրսայի Հայերի ողորմելի վիճակն իրանց մայրենի լեզուի գիտութեան մէջ, հիմնում է ուսումնարան և ջանք է անում Հայերէն լեզուն տարածել իւր հօտի մէջ. իւր հեռանալուց յետոյ ուսումնարանն անխնամ մնալով փակւում է: Բուրսայից գալով Կ. Պօլիս յանձն է առնում Պատրիարքական պաշտօնը, որը վարում է երեք տարի.

որից յետոյ կրկին վերադառնում է ի Բուրսայ, որտեղից 1866 թուին ընտրուելով ԱնգՀանրական Կաթողիկոս զիմում է Ս. Էջմիածին, ուր մի տարուց յետոյ, այն է 1867-ին օծւում է Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց:

Տէր Գէորգ Գ-ը իւր Կաթողիկոսական սուրբ և վսեմ պաշտօնի հետ սերտ կապում է և ուսումնարանական նուիրական խնդիրը. Նորա Կաթողիկոսութեան նշանաբանն է լինում Եկեղեցի և Ուսումնարան: Այդ երկու նուիրականութիւնները սերտ կապուած է տեսնում միմեանց հետ հարազատ գտնուելով իւր նախորդներին. ուստի և առաջին գործն է լինում կազմել Ս. Էջմիածնում մի ուսումնական ժողով, որի գործը պիտի լինէր ուսումնարաններ բանալ, ծրագիրներ մշակել, եղած ուսումնարանները բարեկարգել, հսկել նոցա վերայ և այլն: Այդ ուսումնական ժողովի պարագլուխ է կարգում երկու ականաւոր Եկեղեցականների, այն է Խորէն Եպիսկոպոս Նարայէլին և ի Տէր Հանգուցեալ Գաբրիէլ Եպիսկոպոս Այվազեանին. բայց ափսոս որ Վեհափառ Հօր այդ բարձր ձգտումը նպատակին չէ հասնում. կարճատև է լինում այդ ժողովի գոյութիւնը, որովհետև հակառակ Վեհափառի ցանկութեան ուսումնական ժողովի պարագլուխները թողում են իրանց յանձն առած պաշտօնը և մեկնում են, իսկ գործը մնում է անկատար: Սակայն չի վհատում իւր գործունէութեան մէջ Հաստատակամ Հայրապետը: Կաթողիկոսութեան երրորդ տարին, այն է 1868-ին, կարգադրում է Էջմիածնական տպարանը, ճոխացնում է ընտիր տառերով, մեքենաներով և զգալով կարօտութիւն մի կրօնական թերթի հրատարակութեան, ամենայն ճիգն թափում է և կարգադրում է հրատարակել „Արարատ“ ամսաթերթը: Այդ ամսաթերթը պարտաւորիչ է համարում ստանալ բոլոր հոգևորական դասին, որպէս զի միջոց ունենան դորա-

նով ծանօթանալու կրօնական գիտելեաց, Եկեղեցական կանոններին և կարգադրութեանց: Անմիջապէս սորանից յետոյ ձեռն է արկանում կազմել թանգարանը, այն է ընդարձակում է Ս. Էջմիածնայ աւագ պաշարանն երեք բաժանմունքներով, որոց մէջ բարեկարգ կերպով զետեղում է Եկեղեցական սրբազան անօթները, զգեստներն և թանկագին իրերը: Կարգադրում է և ճոխացնում Էջմիածնի վանքական Մատենադարանը և ցուցակադրել է տալի Մատենադարանի բոլոր ձեռագիր և տպուած մատեանները: Կարգադրում է որ Եկեղեցականների (Վարդապետների և Եպիսկոպոսների) մահուանից յետոյ, նոցա կայքը, եթէ չեն կտակուած յօգուտ ուսումնարանաց կամ այլ բարեգործական նպատակի, անպայման մտնեն վանքական արկղը, որով միջոց կունենայ վանքը հոգալ իւր ուսումնարանների վերայ: 1871 թուին սկսում է հիմնարկել այն սքանչելի ձեմարանը, որ յիրաւի միակ պարծանքն է բոլոր Հայերի համար. 1872 թուին շինութիւնն աւարտում է և կատարում է ձեմարանի օրհնութեան հանդէսը. ձեմարանն իւր հիմնադրի անուամբ կոչւում է «Գէորգեան»: Հրաւիրում է ապա բանիմաց և ուսումնական վերաբիտողներ, Տեսուչներ և Ուսուցիչներ և հրաւիրում է ազգին Հայրապետական օրհնութեան կոնդակներով նիւթական օժանդակութեամբ օգնել իրան իւր սկսած մեծ գործի մէջ, ապահովելով ձեմարանի գոյութիւնը: Ազգը իւր անխոնջ Հայրապետի սիրալիր հրաւերին ամենայն համակրութեամբ հպատակելով, կարկառում է իւր օգնութեան ձեռքը. և ահա նոյն Գէորգեան ձեմարանն և՛ այսօր հսկայապէս կանգուն կայ յօգուտ և ՚ի լուսաւորութիւն մանաւանդ կրօնական դասուն և ՚ի պարծանս ազգիս:

Հանգուցեալ Հայրապետը ՚ի ցաւ սրտի տեսնելով Հայ ծխական ուսումնարանաց ողորմելի և խղճալի դրութիւն-

նը, լղացաւ իւր մէջ Թեմական Վերատեսուէչներ կարգելու կարեւոր միտքը, ուստի առանց ժամակորոյս լինելու 1873 թուին 12-ն Հոկտեմբերի, համարաւ 463 հրամանագրեց Սինօդին Սրբոյ Էջմիածնի այդ առթիւ փութապէս պահանջելով դորա իրագործումը: Բայց առաջ քան զայս նա հիմնուելով մեր Ս. եկեղեցւոյ աւանդութեան վերայ Ռուսաց Օգոստափառ Կայսեր հրաման է խնդրում թոյլ տալ իւր հովանաւորութեան և հսկողութեան ներքոյ ունենալ Հայ եկեղեցեաց կից ուսումնարաններ 'ի լուսաւորութիւն Հայ մանկտուոյն: Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը Բարձրագոյն հրամանաւ բարեհաճում է սրբագործել Հայ եկեղեցւոյ այդ իրաւունքը և այնուհետեւ Թեմական վերատեսուչութեան հաստատութեամբ սկսւում են բարեկարգուիլ Հայ ուսումնարանները դուրս գալով իրանց նախկին խղճալի դրութիւնից: Այս և այսպիսի բազմատեսակ կարգադրութեամբ Հանգուցեալ Հայրապետը եկեղեցին և Ուսումնարանը անխզելի կապով միաւորեց իրար հետ և նոցա բաժանման մէջ կորստաբեր հետեանք նախատեսաւ: Ամենայն տեղ օրհնութեան կոնդակներով բանալ տուեց Ուսումնարաններ եկեղեցւոյ դուռի թներում և ամենայն քաջութեամբ պաշտպանեց ուսումնարանական խնդիրը մինչև իւր կենաց վերջին օրհասը. որով և տուաւ իրաւունք պսակելու իւր անմահ անունը ,,Պաշտպան Հայ Ուսումնարանաց“ փառաւոր և արժանի տիտղոսով:

Տեսնելով Տէր Դէորգ Դ-ը եկեղեցական Աստուածապաշտութեան խանգարմունքը շարակնոց և հոգեւոր երգերի եղանակների մէջ, հրաւիրեց Կ. Պօլսից Նիկողայոս Թաշճեան ականաւոր Ձայնագիրն և ձայնագրութեան արհեստը ծաղկեցրեց Ս. Էջմիածնի մէջ. պատրաստեց ընտիր աշակերտներ, որոնք յետոյ ցրուելով զանազան կողմեր սկսան ուսուցչական պաշտօններ վարել ուսումնարաններում ձայնագրութեան արհեստի մէջ: Տպել

տուհից և տարածեց ձայնագրեալ Շարականներ և այսպիսով ցանկացաւ Վեհափառ Հայրապետը որ առ միշտ մի որոշեալ կարգի և կանոնի տակ լինի մեր եկեղեցական երգեցողութիւնը, քաջ իմանալով որ ներդաշնակ երգեցողութիւնն Աստուածաշնորհութեան ժամանակ, ժողովըրդի մէջ ջերմեռանդութիւն արծարծելու և բարեպաշտական զգացմունքները շարժելու միակ միջոցն է:

Վերջապէս Տէր Գեորգ Գ-ն էր, որ 1882 թուին իւր օրհնութեան կոնդակով հրամայեց Կովկասեան Հայ ուսումնարանաց Թեմական Տեսչին, կազմել Տփլիսում ամենայն թէմերի Հայ ուսուցիչներից և Տեսուչներից մի Ընդհանուր Ուսուցչական ժողով, մշակելու մի որոշ ուղղութիւն և կանոնաւոր ծրագիր թէ ծխական և թէ միջնակարգ ուսումնարանների համար և ուր պէտք է լուծուէին և վճռուէին այնպիսի խնդիրներ, որոնք մինչեւ այդ օրը մութն էին մնացած շատ Հայ ուսումնարանների համար. ժողովը Վեհափառի օրհնութեամբ կայացաւ. բայց տարաբաղտաբար Նորան չը յաջողուեցաւ տեսնել նորա արդիւնքները:

Այսպէս ահա Վեհափառ Տէր Գեորգ Գ. Հայ ազգի Ընդհանրական Հայրապետը, Հայ ուսումնարանաց պաշտպանը տասն և վեց տարի անձանձիր տքնութեամբ գործելով, ամենայն տոկունութեամբ, համբերութեամբ, հաստատուն կամքով և բնաւորութեամբ, սիրով և յօժարութեամբ տանելով իւր ուսերի վերայ Հայ ազգի դրած Հայրապետական վսեմ կոչման ծանր լուծը, շատ երկար մաքառելով զանազան արգելքների և խոչընդոտների դէմ, որոնք շատ դէպքում աւելի բարձր էին քան իւր ոյժերը, հզօր և անշարժուն կամքով, Ազգի և եկեղեցւոյ գոյութեան և նյայծառ բարեգարդութեան տենչով լցուած, Հայ ուսումնարանների բարեկարգութեան և յառաջագիմութեան նուրբ փափագով ոգևորուած, Հայրապետական Վարչութեան

Թեան ղէկը վարելուց յետոյ, ահա՛ Ռեկտեմբերի 6-ին
մահուան անկողնի միջից տարածում է իւր Հայրա-
պետական բազուկները Հայ Հօտի վերայ, սրտեռանդն
օրհնում է վերջին նուագ իւր սիրելի որդիքը—Հայ
ազգը, կտակում է նոցա Սէր և Միաբանութիւն, Եկե-
ղեցի և Ուսումնարան, սլանում է դէպի վերջանիկ կայանը
խառնուէնու իւր դասակից սուրբ Հայրապետներին:

Վ Ե Ր Ժ Ե Ր Ա Ն

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1882 Ա. ՏԱՐԻ

№ 5

ՄԵՐ ՀԱՅՐԵՐԻ ԿՐԹՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

1. Կրթութեան սկզբունքները նոր չեն մտել Հայոց մէջ. նորա այնքան հին են, որքան հին է Հայոց դպրութիւնը: Դեռ եօթուէ դար Բրիտոսից առաջ երբ Հայաստանը բաժանուած էր մի քանի տէրութիւնների, Վանայ թագաւորները փոխ առան այն ժամանակուայ քաղաքակրթեալ տէրութեան Ասորեստանի սեպագիրը, բերել տուին Հայաստան Ասորեստանի գրպիրներին, նոցա ձեռքով գրոշմել տուին Հայաստան ժայռերի վերայ այն բազմախորհուրդ արձանները, որոնք թէեւ տակաւին անընթեռնի մնում են սակայն անշուշտ վկայում են, որ Հայոց կրթութիւնն անհամեմատ աւելի հին է, քան երևում է այդ մեր գրաւոր պատմութեան մէջ: Այն ժամանակուայ Հայոց թագաւորները չէ խորշեցին ընդունելու իրանց արքունիքի մէջ Նինուէի արքունիքում և դիւաններում գործածուած լեզուն, որ ժամանակի քաղաքակրթութեան բարբառն էր արեւելքում: Նորա հրաւիրեցին Ասորեստանից բազմաթիւ ճարտարապետներ և արհեստաւորներ, որոնց ձեռքով կանգնեցին Հայաստանում քաղաքներ, ապարաններ և մեհաններ, Չանցաւ երկար ժամանակ՝ փոխառած կրթութիւնն աղքայնացաւ. ասորի սեպագրի տեղը բռնեց հայկական սեպագրութիւնը. օտար դպիրներին և ճարտարապետներին յաջորդեցին տեղացիք և այս այնպիսի մի ժամանակ, երբ Հայերը բուն զօրութեամբ մաքառում էին Ասորեստանի աշխարհակալների տիրապետութեան դէմ, երբ թշնամական ոգով վառուած զրահաւորուած Հայերն աւելի տրամադիր պէտք է լինէին մերժելու նաև Ասորեստանի քաղաքակրթութիւնը:

2. Խորին հնութեան մէջ արմատ ձգած կրթութիւնն ունէր իւր ներկայացուցիչն և Հայոց կրօնական սրբութիւնների մէջ, Հեթանոս Հայերի աստուածապետն՝ Արամազդ ունէր մի դպիր, որի անունն էր Տիր. սա ճանաչուած էր իբրև «գալիր գիտութեան քրմաց», ուսումն ճարտարութեանց, ունէր պաշտօն երազներ մեկնե-

լու և ամենայն գաղտնիք բացատրելու, կրթութեան այս կատարելատիպը վայելում էր Հայոց մէջ և մեծ ժողովրդականութիւն. նորա անունով էին կնքում շատ անձնական անուններ. զորօրինակ Տըր-դատ (Տիր-ա-տուր) Տիր-ան, Վարազ-Տիր-ոց, Տիր-ոտ և այլն *). նորա մակդիրն է «գրող» բառը, որ իբրև անէծք կենդանի է և այսօրուայ ժողովրդի բերանում. նորա անունով էր պատուում ժողովուրդն և իւր ուսումնականներին ու գիտուններին, երբ անուանում էր նոցա «տիրացու» այսինքն տիր լինելու կամ նորա յատկութիւնները ժառանգելու պատրաստուող անձն. Տրի այսպիսի ժողովրդականութիւնն և ապացուցանում է, որ գիտութիւնն և ճարտարութիւններն օտար և անծանօթ չեն եղել Հեթանոս Հայերի համար. նոցա աչքում գիրը, գպիրը, գիտութիւնն և ճարտարութիւնը սուրբ են և սպասաւորում են ամենիմաստ էակին՝ Արամազդին. այն անձինք, որ կոչուած էին թարգման լինելու Արամազդի և մահկանացուների մէջ, — Հեթանոսութեան քրմերը, պարտաւոր էին նախապատրաստուել, ինչպէս տեսնում ենք այդ Սօսանուէր Անուշաւանի օրինակից, որն իբրև անդրանիկ պատմական քուրմ նախապէս նուիրուեցաւ Արմաւիրի Սրբազան Սօսիներին. Եթէ նախապատրաստութեան հնազոյն օրինակը մի քրմի վերայ ենք նկատում, այդ չի նշանակում, որ միւս դասակարգերի համար էլ պարտաւորական չէր այդ, մենք գիտենք, որ Արտաշէս ա. Աշխարհակալը իւր որդուն Տիգրանին յանձնեց Վարաժ կամ Վարժ իշխանի ձեռքը, որպէս զի նորա մօտ կրթութի նետաձգութեան մէջ. Տիգրան բ. իւր այդ նախապատրաստութեանն էր, երևի, պարտական, որ յետոյ մի աշխարհասօսան ինքնակալ հանդիսացաւ ոչ միայն Հայաստանում, այլև նորա սահմաններից դուրս. նորա նախապատրաստութեան պտուղն էր, երևի, և այն սարսափելի նետաձգութեան եղանակը, որից դողում ոստանում էին Հռովմայեցւոց զնդերը. Մեծ համարձակութիւն չը պէտք է լինի կարծել, որ այդ ժամանակներից նշանակութիւն ստացան Հայոց մէջ վարժ-ել, վարժ-ա-պետ և վարժարան բառերը, որոնց մեկնութիւնն անշուշտ կապ ունի Վարժ կամ Վարաժ իշխանի անուան հետ:

Յ. Երբ քաղաքական կեանքը զարգացաւ Հայոց մէջ, երբ Հայերն հանդիպելով բազմատեսակ օտար ազգերի ծանօթացան զանազան քաղաքակրթութեան, երբ զօրք, զինուորութիւն, արքուն-

*) Ինչքան մեղ յայտնի է Հայոց աստուածութիւնների մէջ մի մի աշն Միհրն է, որ Տրի նման վայելած է այսպիսի ժողովրդականութիւն. Միհրի անունով կնքուած են «Միհր-դատ, Միհր-ան (Տր-դատ, Տիր-ան)», «Մեհրուժան, Մեհենդակ, Մեհհեան» «Մեհհեկան» (ամիսը):

նիք, ազնուական դաս, վարչութիւն և այլն սկսեց կազմակերպուիլ իւրաքանչիւր դարին համեմատ, այն ժամանակ կրթութեան զեկը դտնուում էր ազնուական դասակարգի և քրմերի ձեռքը: Եւրաքանչիւր արքունիք ունէր դայեակներ, և դաստիարակներ: սոքա թագաւորական և նախարարական տոհմի մանուկներից չէին հեռանում. սոցա առաջնորդութեան ներքոյ էին ամենքը մինչև չափահաս լինելները. որսի գնալիս խաղեր ու դրօսարաններ մտնելիս, պատերազմ ելնելիս շարունակ ուղեկից էին նոցա այդ դայեակներն և դաստիարակները: Ատանգի ժամանակ նոքա պէտք է հսկէին արքայազուների կեանքի ապահովութեանը. մեզ օրինակ Սմբատ Բագրատունին Արտաշէս Բ-ի դայեակը, որ իւր սանին փախցրեց Երուանդ Բ-ի ձեռքից, նորա հետ միասին անյայտութեան մէջ ապրեցաւ լեռնական հովիւների մօտ, ապա տարւաւ նորա Արսկաստան այնտեղ մեծացրեց նորան ու կրթեց կարևոր դիտելիքների մէջ և այնտեղից Պարթևների օգնութեամբ եկաւ պատերազմով յաղթեց ու սպանեց Երուանդ Բ-ին և ոչ միայն իւր Սանին բազմեցրեց նորա հայրական գահի վերայ, այլ նորա թագաւորութեան ընթացքում շարունակ ծառայեց նորան իբրև հաւատարիմ դայեակ. մեզ օրինակ՝ Արտաւազդ. Մանդակունին Տրդատ արքային ազատողը կամ Օտա Ամասունին, որ Խոսրովի դուխտ դշուզի հետ միասին ազատեց Սասանեանների ձեռքից և Հայոց արքունի գանձը ու ապաստանուեցաւ Անի ամրոցը մինչև Տրդատի թագաւորելը: Դայեակների և դաստիարակների պարտաւորութեան մէջ էին անշուշտ և նոցա սաների հրապարակական կրթութիւնը. ժամանակի պահանջներին համեմատ կային հրապարակական խաղեր, մրցութիւններ, որսորդութիւն, ձիարշաւ և այլն. անկարելի է, որ դոքա միմիայն զբօսանքի ծառայէին և կարօտ չը լինէին կանոնաւոր վարժութեան, ինչպէս լինում էր այդ միւս հին ազգերի մէջ. մեզ յայտնի են մականական խաղը, գնդի խաղալը, ձիարձակարտնը, ըմբշամարտութիւնը, որոնք իբրև շատ սիրելի արուեստներ զբաղեցնում էին թագաւորներին, նախարարներին և անհասարակ բոլոր ազատաւորներ, դասին, այդ խաղերից զատկային բամբիւնը, ձեռամբ երգելը, ցուցեր և պարեր տնելը: Գողթան երգիչներն և այլն, որոնց բոլորի գոյութիւնն ինքնատիւնեան ապացուցանում է, որ Հայոց մէջ եղել է մի որոշեալ պահանջ կրթութեան և մի որոշեալ ուղղութիւն այդ արուեստները պահպանելու և ընդհանրացնելու. անշուշտ միմիայն կեանքը չէ, որ ուսուցանում էր մեր նախնիքներին այդ արուեստները, այլ և նախապատրաստութիւնը. թէ ի՞նչ ձևով էր լինում այդ նախապատրաստութիւնը, այդ ծանօթ չէ մեզ. միայն բաւական է ուշագրութեամբ զննել մեր արդի կեանքը, որ կարելի լինի մի հաւանա-

կան ենթադրութիւն անել. ներկայումս էլ կան խաղեր, պարեր, աշուղներ և այլն. որտեղ է կրթութիւն մեր մատաղ սերունդը. յայտնի է, որ Հայերս դեռ ոչ խաղերի վարժութիւն ունինք մեր ուսում. նարաններում և ոչ պարերի ու երաժշտութեան վարժարաններ կամ կեդրոններ կան. կրթութեան այդ անհրաժեշտ մասերը տակաւին քաղաքականութիւն դառնալէն մեր դաստիարակութեան մէջ. որտեղ են ուրեմն սովորում մերոնք այդ խաղերը, պարերը, նուագածութիւնն և երգեցողութիւնը. ոչ ապաքէն այն անձինքների մօտ, որոնք ծանօթ են այդ արուեստներին կամ այն տոների և հանդէսների ժամանակ, որոնք գործնական վարժոց են այդ արուեստների համար. բարեկենդանը սովորեցնում է մեզ խաղեր, հարսանիքներն և խնջոյքները սովորեցնում են մեզ պարեր, ժողովարանները, կամ մեր ասիական սրճարանները սովորեցնում են մեզ ածել և երգել. իւրաքանչիւր աշուղ թողնում է իրան յաջորդող մի աշուղ. ուրեմն աւանդաբար յաջորդող սերունդին հաղորդելու սովորութիւնն է պահպանել մեր մէջ մի արուեստ. և այդ է եղել հնագոյն ձեւը Հայոց վարժութիւնների:

4. Հրապարակական կանոնաւոր կրթութեանը նպաստող առանձին հաստատութիւններ գոյութիւն չունէին Հայոց հեթանոսութեան դարերում. այդպիսի հաստատութիւններ, որքան յիշում ենք, Հայոց համար քրիստոնէութիւնն ստեղծեց. Դ. դարում Ք. յետոյ, երբ ս. Լուսաւորիչ կամեցաւ ընդհանրացնել ս. Աւետարանի լոյսը, այն ժամանակ առաջին անգամ բացեց ուսումնարաններ, ուր ժողովեց զանազան տեղերից շատ մանուկներ մանաւանդ քրմական և նախարարական դասերից, որպէս զի քրիստոնէական ոգւով զարգանան: Այնուհետև ուսումնարանն համարուեցաւ անբաժան մասն Հայաստանեայց ս. եկեղեցու. թագաւորներն և իշխանները գնահատելով լուսաւորութեան և գիտութեան բարձր օգուտները, ասպարէզ տուին եկեղեցու առաջնորդներին անկարօտ կերպով ղեկավար կանգնելու կրթութեան և դաստիարակութեան գործին. նոքա յատկացրին եկեղեցու համար տուրքեր, կալուածներ և արդիւնքներ. և ուսման գործը անխափան առաջացաւ: Քրիստոնէական վարժարաններն առաջին անգամ ուսուցանում էին այն ինչ որ ս. Աւետարանի վարդապետութեան համար անհրաժեշտ էր. նոցա ուսմունքն էին՝ ս. Գիրքը, յունարէն և ասորերէն լեզուներ, երգեցողութիւն և գիր: Այստեղ նոյն դրութիւնը կրկնուեցաւ ինչ որ քրիստոնէութիւնից 7—8 դար առաջ. Հայերն սկզբում փոխ առան օտարից եկեղեցու լեզուն, ընդունեցին իրանց մէջ օտարազգի քարոզիչներ և նոցա առաջնորդութեան տակ մտան, որովհետև Դ. դարում իրանք մեծապէս կարօտ էին օտարներին. բայց չանցաւ հարիւր տարի, նոյն օտար կրթութիւնը փոխարկուեցաւ

տեղականի. և այն էլ ո՛ւմ ձեռքով. նոցա, որոնք, ինչպէս օրինակ ս. Սահակ Պարթև «յոյժ առ լցեալ անց ուց անէր վարժիւք զբաղում գիտնովք Յուսեայ» կամ ինչպէս ս. Մաշտոցն Մեսրոպը «ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ զպրութիւն զյոյն... կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրաց», կամ առհասարակ նոցա, որոնք բոլորովին ընտելացել էին օտար կրթութեանը, վարժ էին օտար լեզուների ուսման մէջ և կարող էին բարձր ի գլուխ պանծալ օտարների մէջ. սակայն նոքա անտարբեր չէին գէպի հասարակաց շահը. նոքա կամեցան իրանց վայելչութեան հաղորդակից անել և իրանց համածին համարիւն եղբայրներին, որոնք չարաչար տանջւում էին օտարի գիտութեան մէջ. «տրտում էր երանելի Մաշտոցն, ասում է Փարպեցին, երբ տեսնում էր Հայաստանի մանուկների մեծաջան ծախքերը, որ շատ թոշակներով և հեռագնաց ճանապարհներով երկար ժամանակ գեպերուելով՝ իրանց օրերը մաշում էին ասորի գիտութեան մէջ զպրօցների մէջ»։ Նոքա չը նայելով որ իրանք հմուտ էին զանազան լեզուների զպրութիւններին, չը նայելով որ կատարելագոյն ծանօթ էին «երգողական տառիցն և հոստորական յորդասաց յայտնաբանութեան», չը նայելով որ շատ աւելի տեղեակ էին երևում «փիլիսոփայական արուեստիցն», այնուամենայնիւ իրանց այդ մտաւոր գանձերն համարում էին «անօգուտ մուրդաբանութիւն»։ որովհետև շատ սակաւ շահ էր տեսնում գորանից Հայոց ժողովրդի բազմութիւնը։ Այս իսկ պատճառ եղաւ, որ Հայոց մոռացուած գիրը վերակենդանացաւ լրումն գտաւ ընդհանրացաւ Ե. դարում և, ինչպէս պատմիչն է ասում, կարգեցան զպրօք հօտին ուսմանց, բազմացան դասք գրչաց՝ ելե ելս առնելով զմիմեամբք։ Այսպէս Հայոց ուսումնարանի իսկական ծագումը տեղի ունեցաւ Ե. դարում։ Ինքն Հայոց ուսումնարանի առաջին կազմակերպողը ս. Մեսրոպ զանազան գաւառներից ժողովեց իւր շուրջը մանուկներին առանց խտրութեան դասակարգի և առաջնորդ եղաւ դաստիարակութեան. աւանդութեամբ ցոյց են տալիս ցայսօր այն բլուրը, որտեղ ժողոված էր ս. Մեսրոպ իւր աշակերտներին. այդ բլուրը կոչուում է այժմ ս. Մանուկ կամ Մանկասար և գտնուում է Օշականի և Վաղարշապատի մէջ տեղը և գերբովրդ ցոյց է տալիս, որ դա արդարեւ մի կեդրոն է եղել մայրաքաղաքի և շրջակայ գիւղերի համար. իսկ անունը մանկանց-սար արդէն համապատասխան է նշանակութեանը։ Բացի Մանկասարը, պատմութեան խօսքերին նայելով, ս. Մեսրոպ շատ տեղեր հաստատեց ուսումնարաններ, որոնց վերայ հսկողութիւն գործելու համար երբեմն երբեմն հեռանում էր իւր մշտական տեղից և շրջում էր զանազան գաւառները։

5. Քաղաքական կեանքի արգեցութիւնը միշտ երևում է կր-

Թուօթեան գործի մէջ, այս ստուգումէ իւրաքանչիւր ազգի պատմութեամբ: Հայոց աղղը բացառութիւն չէ, երբ Արշակունեաց դահի անկախ գոյութիւնը տեղի տուեց զանազան օտար իշխանութիւնների, երբ կրթութեան կանոններ և ճաշակ թելադրողն այլ ևս Հայոց արքունիքը չէր, երբ Հայոց ուսումն և դաստիարակութիւնը մնաց միմիայն եկեղեցու պաշտպանութեանն ապաստան, այնժամանակ աղգային կրթութեան վիճակը նոր պայմանների աղբեցութեամբ սկսեց փոխուիլ: Ամենամեծ աղբեցութիւն գործեց Արաբացւոց արշաւանքը, տիրապետութիւնն և քաղաքակրթութիւնը: Հայերն հանդիպեցան մի նոր ազգի, որ լեզուով, կրօնով և ճաշակով միանգամայն նոր էին և անօրինակ. այստեղ կրկնակի է նոր երեւոյթի աղբեցութիւնն Հայոց վերայ. իրանց համաշխարհական լուսաւորութեամբ Արաբացիք, ինչպէս շատ ազգերի, Հայերին էլ խմորեցին ուղղակի կամ կողմնակի. Հայերն ընդօրինակեցին նոցա տաղաչափութեան ճաշակը, նոցա խրթնաբանութիւնն և ճոռոմախօսութիւնը, նոցա աշխարհատեսութիւնն և կրօնամոլութիւնը, որոնք բոլորն էլ տպաւորուած են Հայոց արաբական շրջանի բանահիւսութեան մէջ. պատճառելով հալածանք, բռնութիւն և երկպառակութիւն Հայոց մէջ Արաբացիք, քաղաքականօրէն կազմակերպեցին Հայաստանն այնպէս որ միւսնոյն ժամանակամիջոցում միբանի տէրութիւններ հաստատուեցան նոցա գերիշխանութեան տակ. այդ տէրութիւններն ինքնուրոյն միմեանցից անկախ կեդրոններ ունենալով սկսեցին Թ. և Ժ. դարերում մրցել աշխարհաշինութեան և լուսաւորութեան մէջ, այստեղ իբրև բնական հետեանք մրցողութեան հանդէս եկան բաղմաթիւ նորանոր հոյակապ հաստատութիւններ, որոնց գլխաւոր օրինակն է մեզ համար Անի քաղաքը՝ Բաղրատունեաց շքեղ և մեծանուն դաստակերտը՝ իւր հալար ու մէկ եկեղեցիներով, վանքերով, գրատուններով, հարուստ վաճառանոցներով, մեծակառոյց պատնէշներով, կամարջներով, ապահով ճանապարհներով և նոցա հաստահիմն օթեւաններով: Բայց այդ բարենախանձ մրցողութեան ամենազլխաւոր արդիւնքն եղան Հայաստանի վանքերը, որոնք իբրև միւսնոյն ծնօղի, Հայաստանեայց եկեղեցու վաւակներ՝ բոլոր բաժանեալ մասերի մէջ միևնոյն ուղղութիւնն և միւսնոյն աղբեցութիւնն ունէին: Այդ վանքերն արտայայտութիւն են մի նոր աշխարհատեսութեան, որ հետեանք էր մի կողմից Արաբացւոց պատճառած հալածանքների և միւս կողմից Յոյների կեղծ և խարդախ բարեկամութեան. այդ աշխարհատեսութեան հետեանքն էր այն, որ շատերն աննպատակ ճանաչեցին աշխարհիս բոլոր մեծութիւններն ու երջանկութիւնները. պատահած բոլոր ձախորդութիւններն երկնային պատուհաս համարեցին, Թողին աշխարհն իւր աղմկալից կեանքով և խուսափեցին կրօնաւորութեան համեստ խցի մէջ գտնելու իրանց բարօրութիւնը: Աստի ահա՛ հետեւեալ

վանքերի բազմանալը, թագաւոր և հայրապետ, նախարար և առաջնորդ, մեծատուն և արհեստաւոր առհասարակ իրանց բարեպաշտութիւնն և իրանց հայրենասիրութիւնը վկայելու համար հիմնեցին, նորոգեցին կամ ապահովեցին այդ վանքերը, որոնց մէջ պատասպարուեցան բազմաթիւ կրօնաւորներ: Հայոց թագաւորութիւնները՝ Բագրատունեաց, Արծրունեաց, Սիւնեաց և Վանանդու կարծես փոխադարձաբար մրցում էին այդ գործի մէջ, նոյն կարգով և նոցա սահմաններում դառնում իշխաններն ու եպիսկոպոսները: Այդ փոխադարձ մրցման մէջ զարգացաւ գիտութիւնն ու արուեստը, կրօնաւորներն աստուածահաճոյ գործ ծանաչելով ուսումն ու դպրութիւնը՝ անպարպ գեղերեցան դրքերի և քննութիւնների մէջ. մէկը միւսից աւելի աշխատում էր գերազանցել այն ասպարէզում որն, իրօք, կրկին յոյս էր տալիս վարձատրութեան՝ աստուածային և մարդկային: Նոցա այս անօրինակ ջանասիրութեան շնորհիւ վանքերը կրկնակի նշանակութիւն գտան. նախ՝ իբրեւ աշխատակողն նոքա բաժանում էին պատասպարեալներին այս ծովածուսի կեանքի սնտոխ հոգսերից և ընծայում էին նոցա հոգեկան անդորրութիւն. երկրորդ՝ իբրեւ կեդրոնական ուսումնավայրեր նոքա քաջում էին իրանց ծոցը շատ ուսման տենչացող անձինք առանց խտրութեան հասակի, ծագման և աստիճանի. սոքա չէին անջատ հասարակական գործերից, այլ անդադար մտածում էին լուսաւորութեան և գիտութեան ձայնը՝ իրանց ժամանակի հայեցումաճքներին համեմատ՝ վանքի պատերից շատ աւելի հեռու հնչեցնելու և փրկարար հանդիսացնելու այն ժողովրդի համար, որից բաժանուելու միակ նպատակներն էր նորա բարոյական շահերին աւելի անձնուիրաբար սպասաւորելու և միշտ նորա ցաւերին ու վշտերին անբաժան վշտակից ու մոխթարիչ լինելու: Այս երկրորդ նշանակութեամբ Հայոց վանքերը մեծապէս նպաստեցին հասարակական կրթութեանը և իրանց ժամանակն այնպիսի պատկառելի տեղ էին բռնում Հայոց կեանքի մէջ ինչպէս այժմու դպրոցները, դպրանոցները և համալսարանները. նշանաւորներն էին Շիրակ դաւառում Գպրէվանքը և Հոռոմոսի վանքը, Սիւնեաց աշխարհում Տաթևու վանքը, Վասպուրականում՝ Նարեկայ վանքը, Գուգարաց աշխարհում՝ Հաղբատն և Սանահինը, և այլ շատերը: Վանքերի հիմնարկութեան և ապահովութեան գաղափարն իբրեւ ազգային կրթութեան կեդրոնների յարատեւեց մինչև Ռուբինեանց թագաւորութեան վերջերը. այնուհետև Հայոց քաղաքական անկումը թէև չը խափանեց նոցա գոյութիւնը, սակայն նոցա անշքութեանը պատճառ եղաւ ընդմիշտ: Այս անշքութեանը մեծապէս նպաստեցին նոր քաղաքական երեւոյթները. ինչպէս յայտնի է ժա. դարից սկսած Հայաստան ոտք դրին մէկը միւսի յետեւից սելջուքը, թաթարը, թուրքմէնը և այլ վայրենի հրոսակներ: Սոքա

չը բերին իրանց հետ քաղաքակրթութեան տարր. իրանց բարբին և սովորութիւններին համեմատ հուր և սուր էին սփռում նոքա իրանց տիրած երկրներում: շէնք, ճարտարութիւն, մշակութիւն, հասարակական կայք և կացութիւն, գիտութիւն, օրէնք—այս ամէնն օտար էին նորեկ բռնապետների համար. այդ պատճառով ամենայն ինչ, որ մինչև ժդ. դարու վերջերը նպաստում էր ազգային կրթութեանն և բարեճոխութեանը սկսեց տապալիլ և հողոց մոխրոց լինել: Ամէն իւր գլուխն ազատելու և ապահով խորշ գտնելու էր շտապում: Փոքր ինչ վերակենդանութեան շունչ փչեցին Հայոց աշխարհի աւերակների մէջ Մայր Աթոռի վերանորոգութիւնն ժե. դարում: Աւարաբաղի մեղքների շարժումը ժը. դարում: Մխիթարեան միաբանութեան հաստատուիլը, տպագրութեան ծաղկիլը և նոր դպրոցների հիմնուիլը և այլն: Բայց այս վերակենդանութեանը պակաս էին լայն և ընդարձակ ոգի ներշնչող գաղափարներ, որոնք պահուած էին ժթ. դարի համար:

6. Արթարանների բոլոր տեսակների մէջ՝ ե. դարերից սկսած մինչև ժթ. դարը՝ գիտութեան կեդրոնն էին ս. Գրքի ուսումը և եկեղեցական կանոնները. ամենայն ինչ ամփոփուում էր այդ կեդրոնի մէջ. սակայն այսպիսի կեդրոնականութիւնը չէր խանգարում ծանօթանալու և արտաքին գիտութիւններին, որոնց բոլորին ծանօթանում էին միևնոյն կրօնական-եկեղեցական տեսակէտից, եւ այսէ պատճառը, որ կրօնական ուղղութեամբ դաստիարակուած մեր նախնիքների մէջ մենք տեսնում ենք բազմակողմանի յատկութիւններ, նոքա մինչև անգամ չէին խորշում հեթանոսական դպրոցներից, հեթանոս վարդապետներից, այլ ակորժով լսում էին նոցա ճառերն և վարդապետութիւնները: Բանիս ապացոյց հայ հեղինակների թողած գրաւոր երկասիրութիւնների բազմատեսակութիւնը. թարգմանութիւն օտար լեզուներից, ուրեմն և գիտութիւն օտար լեզուների, փիլիսոփայութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, պերճախօսութեան արուեստ, քերականութիւն, երաժշտութիւն և այլն, ոչ միայն անծանօթ չէին հայ ուսանողներին, այլ մինչև անգամ եղել են նոցա միջից նշանաւոր ներկայացուցիչներ: Նոքա այսպիսի բազմակողմանի զարգացման հասնում էին մեծ մասամբ օտար աշխարհներում: Ինչպէս յայտնի է ե. դարում և այնուհետև ընդհանրացաւ Հայոց մէջ սովորութիւն օտար երկրներ գիմելու ուսման համար. գլխաւոր կեդրոններն, ուր գիմում էին հայ ուսանողները, էին Եդեսիա, Աղէքսանդրիա, Աթէնք և Բիւզանդիա. վերջինս շատ երկար ժամանակ ծառայեց իւրեւ կատարելագործութեան կեդրոն. սորանից զատ ուր և գտնուէին նշանաւոր ուսուցիչականներ, հայ ուսանողները ձգտում էին անշուշտ աշակերտելու նոցա. մեզ օրինակ Անանիա Շիրակացին՝ նշանաւոր համարողն ու աստեղա-

գետը է. դարում որ շատ տեղեր մանդալուց յետոյ՝ Բիւզանդիայից դալիս է Տրապիզոն քաղաքը՝ Տիւքիկոս աստղաբաշխին աշակերտելու, աստղաբաշխութեան «հղօր արուեստը, որ թագաւորներին է ցանկալի» ուսանելու և այդ արուեստն Հայաստան բերելու. նա այդ ուսումնասիրութեան ժամանակ դէպքը չի կորցնում իւր ուսուցչի՝ Տիւքիկոսի մատենադարանին ծանօթանալու. «զի կայր առ նա անչափ գրեանք, գաղտնիք և յայտնիք, եկեղեցականք և արտաքինք, արուեստականք և պատմագիրք, բժշկականք և ժամանակագիրք»։ Գեղեցիկ օրինակ այն բազմակողմանի ուսումնասիրութեան, որով վառուած էին Հիւրակացու նման շատ վարդապետներ Հայոց դարաւոր պատմութեան մէջ. բաւական է յիշել մի քանի անուններ, որ համոզուենք այս մտքի ճշմարտութեան մէջ. ում չեն զարմացնում իրանց բազմակողմանի և խոր տեղեկութիւններով քերթողահայր Մովսէս Խորենացին, Գաւթ Անյաղթ փիլիսոփան, Եղնիկ Վոդբացին, սոփեստէս սարկաւագ-վարդապետը, Ներսէս Հնորհալին, Ն. Լամբրոնացին, Գօշ Մխիթարը, բժշկապետ Մխիթար Հերացին և այլ սոցա նմանները։ Սոքա հին դարերի մտաւոր յառաջագիմութեան աստղերն են, որոնց նմանը դեռ չէ ծնուել Հայոց նոր սերունդի մէջ՝ չունայելով ներկայ ժամանակիս հսկայաքայլ շարժմանը։

7. Հայոց մէջ դպրոցական կրթութեան չափ նշանաւոր եղած է և մասնաւոր աշակերտութիւնը երևելի անձինքներին. Փարպեցին վկայում է ս. Վարդան Մամիկոնեանի մասին, թէ նա ուսեալ է ս. Գրքին տեղեակ մարդէր. ուսումէր առել իւր պապի ս. Սահակ Պարթևի մօտ. իրան մասին վկայում է Փարպեցին թէ սնուել և ուսում է առել երանելի Աղան Արծրունու մօտ. իսկ Վահան Մամիկոնեանի, նորա եղբայրների և Վամսարական նախարարների մասին ասում է, որ նոցա կրթում և պատրաստում էր Տէր Գիւտ Վաթուղիկոսը. առաջինների կրթութեան վերայ մեծ հոգս ունէր նոցա մայրը Չուիկ Մամիկոնեանը, ինչպէս և սորա ժամանակակից շատ նախարարական տիկնայք, որոնք, ինչպէս վկայում է Փարպեցին, իրանց մանուկների ուսման վերայ մտածելով «զօգտաբեր շքեղաբար հրապահանգս մանկանցն հոգացեալ լնուին»։ Մասնաւոր աշակերտութեան երևելի աւելի շատ հանդիպում է Հայոց անկման դարերում Ժգ. դարից սկսած. այստեղ իւրաքանչիւր ուսումնատենչ պատանի մշտնում էր մի վանք մի գիտնական վարդապետի մօտ և նորան սպասաւորելով հայթհայթում էր, ինչպէս կ'ասուի, իւր մտաւոր կրթութեան կերակուրը. այսպիսիներից մի գեղեցիկ օրինակ է Մխիթար Սեբաստացին՝ այս մարմնացեալ եռանդը, այս կենդանի նահատակը, դարի աշակերտութեան մէջ, որ ամէն դուռ բաղխոց իւր հայրենի երկրում, շատ վարդապետներ ու վանքեր փոխեց, և այդպէս մինչև Ա.

Պօլսի հայ և օտար վարժապետների աշակերտեցաւ, ու իւր թերութիւններն ուղղելով հանդերձ՝ ինքն ուսուցիչ եղաւ շատերի և ի վերջոյ ժողովեց իւր շուրջն այնպիսի ուսումնաստենչ երիտասարդներ, որոնք իւր նշանաւոր միաբանութեան անդրանիկ անդամներն եղան և Հայոց մտաւոր վերածնութեան կարապետները:

8. Մի շատ խորին հնութիւն ներկայացնող կրթութեան մէջ, անկարելի է որ առաջնորդող դաստիարակական սկզբունքները չըլինին պատճառ նորա յարատեւութեան: Եթէ մենք չունինք միջոց գոյնը պնդելու հեթանոսական դարերի նկատմամբ, գոնէ քրիստոնէական կրթութեան մասին աներկբայ ենք: Քրիստոնէական դպրոցի հաստատութեան և արդիւնաւորութեան պատճառ այն դաստիարակական սկզբունքներն են եղած, որոնք մինչև ներկայ դարս համատարած ամէն ազգի մէջ գոյութիւն են ունեցած աւելի կամ պակաս նշանակութեամբ: Այդ սկզբունքների գլխաւոր աղբիւր եղած է ս. Գիրքը և այդ պատճառով էլ դպրոցների տուած ուղղութիւնն առհասարակ կրօնական էր: Հայոց նախնական դպրոցներում թագաւորող սկզբունքներն հետեւեալներն են.

ա. Բոլոր գիտութիւնների և ուսմունքների գլուխն ամսուածային գիտութիւնն է: Մարդս ամենից առաջ պէտք է գիտենայ ճանաչել իւր Աստուծոն և Նորա բոլոր պատուիրանները, պէտք է գիտենայ պաշտել Նորան և կատարել Նորա կամքը: Այս սկզբունքի համառօտ արտայայտութիւնն է Սողոմօն Իմաստունի խօսքը «Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն»: Իւրաքանչիւր աշակերտ պարտաւոր էր իրան առաջնորդ դնենալ այս սկզբունքը և իւր ջերմեռանդութեանն ու հաւատարմութեանն ապացոյց ներկայացնել միշտ իւր ճշմարիտ երկիւղածութիւնը. կարդալ անդադար ս. Գիրքը, իմանալ աղօթքներ, անձանձիր աղօթել առանձին և հրապարակաւ, եկեղեցի յաճախել առանց թուլանալու և բոլոր ծէսերին ու արարողութիւններին հանդիսատես լինել իբրեւ ճշմարիտ հաւատացող ու հաղորդակից: Այս վերջիններս անշուշտ արտաքին նշաններ են, որոնք հաստատում են թէ Աստուածային գիտութիւնն ամբողջապէս տիրել է մարդու հոգու վերայ:

բ. Ուսում տալ նշանակում է արմատացնել աշակերտի մէջ բարի խրատներ և բարի մտքեր, կրթել նորան բարոյական կեանքի մէջ, ընտելացնել նորան համբերութեան, համեստութեան և չափաւորութեան մէջ, կազդուրել նորա հոգին այնպէս, որ նա լինի մարգասէր, աշխարհատեաց և միշտ առաքինի. այստեղ մեր հայրերին առաջնորդում է ս. Գիրքն իւր զանալան մասերով. Պօղոս առաքեալն հայրերին խրատ է տալիս սնուցանել զաւակներին խրատու և ուսմամբ Տեառն:

գ. Կրթել աշակերտին նշանակում է սովորեցնել նորան կա-

նոնաւոր մանգալ, երեսի վերայ համեստութիւն փայլեցնել ամէն տեղ, չը ծիծաղել, չը շարժել անպատեհ ձեռքերը, ոտքերը, աչքերը, զլուխը, իրանը որոշեալ դիրքի մէջ պահել, այդ պատճառով գովելն են ճանաչել այն դաստիարակութիւնը, որով հոգու ազնուութիւնն արտափայլել կարող էր դէմքի և մարմնի միւս շարժումների մէջ. այն դաստիարակութիւնն էր լաւ, որը քօղ էր ձգում աչքերի վերայ, անկարգ ծիծաղն արգելում էր, լեզուն սանձում, որկրամոլութիւնը չափաւորում, բարկութիւնն հանդարտեցնում և առհասարակ կարգ էր դնում բոլոր վարմունքի մէջ. Այս է պատճառը, որ հասարակաց առակ է դառել թէ «յերեւիլ ատամանց վերանան շնորհք» կամ թէ «բայլք ոտից» դոյնք երեսաց յայտ առնեն զընութիւն մարդոյ, Այս սկզբունքի հիման վերայ «չար» աշակերտ էր համարուում այն, որ կայտառ էր, եփ էր գալիս, իաղալ ու խնդալ էր սիրում, իւր տաքարիւն ժամանակ ստիպուած էր կարգից դուրս գալ և այլն. «չար» էր այն աշակերտը, որը ծիծաղում էր. «չար» էր այն աշակերտը, որ բարձր էր խօսում կամ անժամանակ երգում էր. «չար» էր նմանապէս երբ անկարգ խօսքեր ու յիշոցներ էր վիժում ընդանից, Այնպէս որ երկրորդական միշտ շփոթում էին նախկին գլխաւորի հետ և բոլորը մի սկզբունքով էին դատում. Այս էր պատճառը, որ հին կրթութեան մարդիկ չափազանց սանձուած են և սովոր են տոկալ նեղութեան:

դ. Կրթութեան այսպիսի նպատակներին հասնելու համար ընդունուած էր ուսանել պիւր, դպրութիւն և արուեստ. սոքա նախնի ժամանակներում արուում էին աշակերտներին իրրեւ միջոց բարւոք դաստիարակելու. ամենայն ուսում լինէր այդ՝ կրօնին կամ եկեղեցուն վերաբերեալ, թէ այդ շրջաններից հեռու, նշանակութիւն չունէր և չէր կարող բարձրացնել աշակերտին, եթէ վերջինս թերի էր վերեւի երեք կէտերի մէջ. այդպիսի գիտուններին համարում էին «մեղր շան տկի մէջ» դոցա գիտութիւնն իրանց անձին անօգուտ և հասարակութեանը գայթակղութիւն էին ճանաչում. այդ է պատճառ, որ վերջին դարիս մէջ Հայ ժողովուրդն սկզբում շատ երկմտութեամբ ընդունեց նորուս երիտասարդներին, մեծ մասին կարծելով հեռու աստուածապաշտութեան շաւղից, բարոյական կեանքից և արտաքին սովորական մարդավարութիւնից. այդպիսիների ուսումն և գիտութիւնը ժողովրդի աչքին անարգ և փնասկար էր երեւում: Իսկ ընդհակառակը նոքա, որոնք վերեւի երեք կէտերում կատարեալ էին և միւսնոյն ժամանակ գրել ու կարգալ գիտէին, այնպիսիները ժողովրդի մէջ ամենաբարձր մարդիկ էին, խելքը և հանճարը նոցա մօտ էր բնական, նոքա արժան էին ամէն տեսակ բարձր կոչման և պատուի, նոցա ձեռին էր կեանքի գաղտնիքների կախարդական բանալին:

և. Բաւական չէ, որ մարդիկ կամենան ուսանիլ և ուսուցանել, պէտք է և կարողանան նոյնը, Ոչ աշակերտին ներկի էր ծուլանալ և ոչ վարժապետին թոյլ մնալ: Վարժապետի գրուածինը հեշտացնելու համար անհրաժեշտ էր ճանաչուած ծեծը, որպէս զի գործը առաջ գնայ. այս սկզբունքն էլ բղիտում է ս. Գրքի խրատներին, որոնք թեւադրում են անշուշտ «խրատել» այսինքն ծեծ տալ տղային. «Ով որ սիրում է իւր որդուն, նորա տանջանքները չը պիտի պակասացնէ, որպէսզի վերջը ուրախ լինի» ասում է Սողոմոն. «ծեծը և յանդիմանութիւնն իմաստութիւնն կուտան. մի՛ խնայիր ծեծել տղային, որովհետեւ եթէ գաւազանով խփես, նա չի մեռնի. դու նորան գաւազանով խփում ես, բայց աղատում ես նորա անձը մահից» ասում է նոյն իմաստուն արքան Առակաց գրքի մէջ: Այս սկզբունքն առաւել ընունելութիւն գտաւ այն պատճառով որ մեր հայրերն հաւատացած էին թէ վատ բանը միանգամ որ մարդու մէջ մտնի, էլ հեշտութեամբ դուրս չի գալ. «Դժուարին է արմատախիլ անել այն ինչ որ մանկական սրտերը համարեալ թէ կաթի հետ միասին են ծծել» ասում է ս. Յովհան Ոսկերեքանը: Իսկ վատը արգելելու կամ արմատահան անելու համար գործ էին դնում մարմնի հարուածներ: Ծեծի համար սահմանուած էին գործիքներ, որոնցից նշանաւորն է թաթը. սա մի երկար ու տափակ ծայրը լայն և գնդաձև փայտ է, որով խփում էին աշակերտի ձեռքերին. Հայոց հին սովորութիւն է սա. հին հայերէն պատկերազարդ ձեռագրերի մէջ հանդիպում են պատկերներ, որոնց մէջ նկարուած է՝ վարժապետն աթոռի վերայ բազմած և աշակերտները նորա առաջ գրքերը ձեռքերին կանգնած. վարժապետը բռնած ունի մի փայտ՝ ծայրը հաստ. այդ հին վարժապետների պատմական սարսափելի «թաթն» է: Բայց թաթը միջակ պատիժն էր. կար աւելի սարսափելին, որ ասում էր փալախայ. այս գործիքով աշակերտի զոյգ ոտը պնդում էին և մերկ նրբաններին (ոտքի թաթերին) խփում էին բարակ դողդոջուն ճիւղոտով այն աստիճանի որ ոտքի մատերից արիւն հոսէր կամ գոնէ հասնէր այդ կէտին: Ամենաթեթեւ պատիժներն էին ապտակել, չոքեցնել (չատ անգամ մերկ-ծունկ աւազի վերայ) կամ ականջները քաշել և այլն: Ամեն աշակերտ պէտք է այս բաղցրութիւնները վայելէր. այդ մի բարիք էր նորա համար. գոնէ այսպէս է մեկնում ս. Ներսէս Շնորհալին, երբ ասում է իւր խրատների մէջ.

«Ժէն ժուժկալ լինել, ասէ, յուսումն,

Թէ և ապտակ առնուս յարբումն.

Հայեաց յոսկին որ իքրայումն,

Զի ծեծելով առնու զմաքրումն:

«Քէն քեզ համարել տայ բարեկամ

Որք վասն ուսման հարուն քեզ գան,

Քանզի ապտակ և գաւաղան

Յետոյ բազում փառս քեզ տան։

Այս խիստ սկզբունքների արտայայտութիւն են հետեւեալ առածները. «ուսման արմատը դառն է, պտուղը քաղցր» կամ թէ. «որ ոչ լուիցէ ունկամբք, լուիցէ թիկամբք»։

Ծեծի գործածութիւնը տեւում է մինչև ներկայ ժամանակս. հոգեբանական կանոններին հակառակ այդ սկզբունքը գոյութիւն կարող էր ունենալ տգիտութեան դարերում երբ այդ ձևով դաստիարակելը բացառական երևոյթ էր, այլ ընդհանուր սկզբունք էր։ Մեր արդի դաստիարակները առանց պահանջելու հին կրթութեան բարոյական առաւելութիւնները՝ երկու ձեռքով բռնած են այս ե. սկզբունքը և գործ են դնում ոչ թէ խորշ ու խաւար տեղերում ուր և լուսաւորութեան նշոյլ անգամ չի մտած և տգիտութիւն ու կիրքը անպատկառ երեսով կարող են դեռ ասպարէզ ելնել, այլ ո՛վ զարմանք, մեծ քաղաքներում, մեծ դպրոցներում և այն էլ ո՛վ, այնպիսի վարժապետներ, որոնց արդէն քաջ ծանօթ է այդ սկզբունքի կատարեալ փաստակարութիւնն և անշահութիւնը, որոնք քաջաքաջ ուսումնասիրած կ'երևին հոգեբանութիւն և այլ մանկավարժական գիտութիւններ և լուսաւորուած բարձր ուսումնարաններից ելած մարդիկ են. մինչդեռ ժը. դարում Հայոց երգիչներից մէկը Պետրոս վարդապետ Ղափանցին, թէև կարող էր համակրել այդ սկզբունքին, լայց իւր երգերից մէկի մէջ ծեծն անօգուտ է համարում. «անշահ է դան, իշոց խթան, ուր չիցէ ջան»։ ասում է նա. իսկ հայ ժողովուրդն անուղղանների համար իրանից արդէն վճռել է, որ սեխն սապոնը, խեփն խրատն օգուտ չունի։

Ղ. Ծնողք պարտական են հոգալ իրանց զաւակների կրթութեան մասին. նոքա պէտք է սովորեցնեն խնայողութիւն, չափաւորութիւն, հնազանդութիւն, մաքրութիւն, մեծին պատուել և այլն։

«Այն հայրերը, որոնք իրանց զաւակների դաստիարակութեան և կրթութեան համար հոգս չեն անում, սպանում են նոցա. չը կայ մի բան, որ այնպէս փչացնէ մանուկներին ինչպէս չափազանց հոգացողութիւնը նոցա ժամանակաւոր բարօրութեան մասին, ասում է Ոսկերեքանը, Եւ այս է պատճառ, որ հին հայրերը ծայրայեղ նշանակութիւն տալով այս սկզբունքին, մոռնում էին շատ անգամ ծնողական գութը, անխնայ նեղում, ճնշում և պատժում էին իրանց զաւակներին. և այս սովորութիւնը շատ հին է. բանիս ապացոյց Արտաւազդ մանուկը Մամիկոնեան, որն իւր անհնազանդութեան համար մտրակներով գերծած գլխի վերայ սարսափելի ծեծ կերպ և ուր մեծից, ինչպէս պատմում է Փաւստոս Բիւղանդ. դ. դարում։ Այս պիսի մի դաժան սովորութեան հետեանք է անշուշտ այն, որ հայ.

րերն, երբ իրանց զաւակին յանձնում էին վարժապետի, բոլոր իրանց փափագն ամփոփում էին այս խօսքերի մէջ. «միսը քեզ, ոսկորն ինձ»։ Տարօրինակ միամտութիւն. էլ չէին մտածում որ անմիտ կմտխրը և ոչ իսկ ընդունակ կը լինի իւր գլուխը պահելու։

9. Այս է մեր հայրերի կրթութեան համառօտ նկարագիրը։ Նոցա ժամանակը, նոցա ունեցած միջոցները, նոցա իրանց կենսական պահանջները անհամեմատ աւելի սարգ էին քանթէ այժմ։ այդ պատճառով նոցա կրթութեան գծերը պատմութեան մէջ բազմակողմանի չեն երևում։ Վերէն յիշուած սկզբունքների առաջնորդութեան տակ նոքա սիրեցին ուսումնական սիրեցիկ գիտութիւն իրանց կեանքը նշանաւորելու համար։ Նոքա համոզուած էին, որ տգիտութիւնը զրկում է մարդու կատարեալ կեանքից, նոքա այնպէս էին ճանաչում թէ, երբ մարդս աշխարհային մեծութիւններով լցուած լինի և «մտօքն աղքատագոյն» այնպիսին շատ շատերից ողորմելի է։ Այս սէրն և յարգանքը դէպի լոյսն և գիտութիւնը նոքա աւանդեցին մեզ, մինչդեռ իրանք իրանց ուժի չափ նշանաւորեցին Հայոց պատմութեան դարերը։ Այժմ տեսնենք թէ ի՞նչ է նոր դարուս կրթութիւնը. ի՞նչպէս ենք կրթուում մենք և ի՞նչպէս ենք կրթում մեր մատաղ սերունդին։

(Կը շարունակուի)

ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԵՆՆԵՆՏՑ:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ
ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ։*)

Հայկազանց ժամանակներից Արշակունեանց թագաւորութեանն անցնելով, ամէնից առաջ ներկայանում է մեզ նոյն թագաւորութեան Հիմնադիրը՝ Վաղարշակ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է որ այստեղ էլ, բուն նիւթի մէջ մոռնելուց առաջ, անհրաժեշտ է մի քանի նախապատրաստական տեղեկութիւններ տալ մանուկներին այն ազգի վերայ, որ ամենափառաւոր իշխանական հարստութիւնը տուեց մեզ։ Պարթեւների ծագումը, նոցա պատմական բաղդը հնութեան դարերում, Յոյներից նուաճուիլը, Սելեւեան իշխանութիւնից ազատուիլը, նորանոր երկրներ տիրելը եւ մի մեծ պետութիւն հիմնելը պարսկական հին թագաւորութեան աւերակների վերայ,— այս բոլորը, թէեւ համառօտապէս յիշատակուած, բայց եւ այնպէս կը նպաստէ հասկացնելու երեխաներին, թէ ինչպէս եղաւ որ Հայերը, նոյն Սելեւեան թագաւորների գերիշխանութեան օրով, իրանց տարտամ վիճակից ձանձրացած՝ դիմեցին պարթեւների պաշտպանութեանը, խընդրելով որ գան իրանց երկրին տէրութիւն անեն, այն միջոցին երբ Մ. Խորենացու լակոնական վկայութեանը նախելով՝ «այր զարամբ ելանէին տիրել աշխարհիս» Հայոց։

Այն կէտը՝ թէ Հայերը պարթեւներից չը նուաճուեցան, այլ ինքնայոժար կամքով եւ որոշ պայմաններով հրաւիրեցին նոցա իրանց երկիրը, յիշատակութեան արժանի է ոչ այնքան ավգային անձնասիրութիւնը գգուելու նպատակով, որքան մի կարեւոր պատմական իրողութիւն հաստատելու, այն է՝ թէ հայ—պարթեւական տէրութիւնը, հէնց իւր սկզբնաւորութիւնից, բոլորովին անկախ էր բուն պարթեւական տէրութիւնից, թէ՛ ներքին կառավարութեան եւ թէ արտաքին յարաբերութիւնների մէջ։ Եւ այս

*) Տես Վարժարան № 4.

Հաստատուում է նոյն իսկ Արշակի խօսքերով՝ որ իւր եղբոր գլխին Հայաստանի թագը գնելով՝ իրաւունք է համարում նորան բոլորովին ազատ ու անկախ ներգործելու իւր նոր տէրութեան մէջ, «որչաւի միտք ք» եւ քաջութիւն հասանեն, ղի սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի»։ Միւս կողմից, հասկանալի է նոյնպէս թէ Վաղարշակ, որ նախապէս իւր եւ հայ մեծամեծների մէջ կայացած պայմաններով էր մտնում Հայաստան, ներքին հիմնական կարգադրութիւնների մէջ, որքան էլ ցանկար այդ կարգերին պարթեական բնակորութիւն տալ, չէր կարող իւր անձնական հաճոյքին համեմատ վարուիլ այլ ընդհանրապէս պիտի հիմնուէր ազգային հին սովորութիւնների վերայ, որոնք խոր արմատ էին գրել հայ ժողովրդի մէջ։

Առաջին աչքի զարկող երեւոյթը՝ որ անախորժ տպաւորութիւն գործեց Վաղարշակի վերայ, այն էր որ նա Հայաստանի ամէն մի նահանգի ու գաւառի վերայ մի մի տէր գտաւ, որ իւր երկրի վերայ թագաւորական արտօնութիւններով էր իշխում, եւ իրան իսկապէս մնում էր միայն Արարատեան նահանգը՝ Հայոց աշխարհի կենտրոնում։ Այս մասին, ի մէջ այլոց, իւր ամբողջութիւնն այսպէս է յայտնում նա եղբորն աւղղած դառն գանգատի մէջ. «Ոչ կարգք ինչ լեալ աստ յայտնի եւ ոչ մեհենից պաշտամունք. եւ ոչ գլխաւորաց աշխարհիս առաջինն յայտնի է եւ ոչ վերջինն, եւ ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն ի խուռն ամենայն եւ վայրենի»։ Բայց եւ այնպէս Վաղարշակ ստիպուեցաւ վաւերացնել այն վարչական դրութիւնը, որին հնութիւնն եւ երկարատեւ սովորութիւնն օրէնքի զօրութիւն էին տուել. նա հարկաւորուեցաւ օրինաւոր համարել այն կարգը, որ ըստ ինքեան թագաւորական իշխանութեան համար վաւերացուող ու վնասակար էր, երբ համոզուեցաւ թէ իւրաքանչիւր նախարարական սոհմ իշխում է հին ժամանակներից ժառանգութեամբ ստացած կայունների վերայ։ Նորաբոլոր ճարտարութիւնն այն եղաւ միայն, որ աշխատեց

Նախարարութիւնները կենտրոնական իշխանութեան հետ կապելը նոցա վայելած արտօնութիւնների փոխարէն զանազան պարտաւորութիւններ դնելով նոցա վերայ՝ արտօնութիւններ եւ պարտաւորութիւններ որ ուսուցիչը զանց չը պիտի անէ մէկ մէկ յիշել, եթէ կամենում է մի գաղափար տալ Արշակունեաց թագաւորութեան կազմակերպութեան վերայ:

Այս բաւական չէ: Խորագէտ թագաւորը նախարարների ազդեցութիւնը թուլացնելու համար՝ զանազան պաշտօններ ստեղծեց, թագադիր ասպետութիւնից սկսած մինչեւ ամենաստոր պաշտօնները, մէկին հանդերձապետ նշանակելով, միւսին տակառապետ, երրորդին մատակարար, եւ այսպէս իջնելով մինչեւ զենարանների, հաւանոցների ու ամառանոցների վերայ առանձին վերակացուններ կարգեց: Այս հնարը, որ շատ դարեր յետոյ յաջողութեամբ գործ դրած ենք տեսնում Ֆրանսիայում Լուի Ժորժի ձեռքով, Հայոց թագաւորին էլ միջոց տուեց նախարարներին արքունիքը քաշել նահանգների խորերից, ուր հեշտութեամբ կարող էին թագաւորութեան դէմ խորհել ու գործել: Նկատելու է որ այս պաշտօնները մեծ մասամբ օտարացեղ նախարարներին յանձնեց Վաղարշակ, եւ այս համբամանքը ցոյց է տալիս թէ ինչ ազդեցութեան տէր էին դարձել մեր հայրենիքում գաղթական Ժողովուրդներն Արշակունեաց գալուց առաջ: Բայց եւ հայ ազգին իւր լիտահութիւնը ցոյց տալու համար՝ Վաղարշակ իւր կեանքի պահպանութեան համար թիկնապահներ կարգեց, ինչպէս նաեւ արքունի դրան պահպան գնդեր՝ բուն հայ իշխաններից: Դարձեալ մարդպետութիւնը (պալատական կանանց պահպանութիւնը) եւ քրմապետութիւնը, երկուսն էլ լիտահութեան պաշտօններ, — հայադէմ իշխանների յանձնեց, առաջինը Հայր իշխանին, իսկ երկրորդը Վահուհեաց, որոնք Վահագն ազգային դիւցազնի ցեղիցն էին: Հայոց հին մայրաքաղաքն Արմաւիր սրբազան քաղաքի փոխեց, շինելով այնտեղ առաջին մեհեանը, որի մէջ կանգնեց առաջին արձաններն արեգական եւ

մար եւ որ մեղանում, իբրեւ բացառութիւն, միայն մէկ երկու անգամ երեւում են Աբգարի յաջորդների օրով:

Այս բոլոր գործերի մէջ Վաղարշակ ժամանակ էր գտնում երկրի շինութեան եւ ժողովրդի բարօրութեան վերայ էլ աշխատելու. նա շատ քաղաքներ ու աւաններ շինեց, շատն էլ նորոգեց եւ բնակիչներով լցրեց: Երբ Մորփիւզիկէսի դէմ յանձն առած արշաւանքից յալթութեամբ վերադարձաւ, թագաւորն առ ժամանակ կանգ առաւ Տայոց լեռնոտ նահանգում: որ անխնամ ու անմշակ մնացած լինելով՝ բնակութեան յարմարութիւնները կորցրել էր, ժողովուրդն էլ աւաղակութեամբ ու մարդասպանութեամբ էր պարապում: Ամէն կողմից մարդիկ բերել տուեց, բազմաթիւ հողաբլուրներ, որոնցից թափուած հեղեղները վնասակար ճահիճներ էին գոյացրել, հարթեց հաւասարեցրեց, ջրանցքներ բաց արեց ճախճախուտ տեղերը ցամաքեցնելու եւ վարուցանի պիտանի անելու համար. այնպէս որ այն վայրերն ու անբնակ երկիրը կարճ միջոցում մի գեղեցիկ երկրի փոխարկուեցաւ՝ այգիներով ու բուրաստաններով, ամառանոցներով ու որսի տեղերով:

Ընդհանրապէս խօսելով, Վաղարշակի թագաւորութիւնը մի նոր եւ մինչեւ այն ժամանակ անծանօթ գործունէութեան ասպարէզ բաց արեց Հայաստանի համար: Այս պատճառով նորա յիշատակը անմոռանալի մնաց ազգի մէջ եւ նորա օրինագիրքը միշտ իբրեւ հիմ ընդունուեցաւ Հայաստանի քաղաքական եւ ղինուորական կառավարութեան համար ոչ միայն բոլոր Արշակունեաց, այլ եւ Բագրատունեաց եւ ըստ մասին նա եւ Ռուբինեանց ժամանակ: Պարզ է ուրեմն որ նորա գործերը տեղնիտեղը պատմելով՝ թէ՛ շատ բան կը հասկացնենք մանուկներին եւ թէ աւելորդ կրկնութիւններից ազատ կը լինինք մեր ապագայ պատմութեան մէջ:

Վաղարշակ իւր յաջորդներին թողեց մի ընդարձակ տէրութիւն, որի սահմանների մէջ մտնում էին հարաւային եւ արեւելեան կողմից Ատրպատականի, Ասորեստանի եւ Միջագետքի մի մասը, արեւմտեան կողմից երկրորդ

Կապագութիւն, իսկ հիւսիսում Սեւ ու Կասպից ծովերի միջոցում գտնուած երկրները, այսինքն Նգերացոց, Վրաց, Աղուանից, Սիւլթացոց եւ Կասպից երկրները մինչեւ Կովկասեան սահմանները: Իւր յաջորդների բոլոր ջանքը պիտի լինէր, կարծես, իրանց ցեղապետի հաստատած կարգերն արմատացնել այս մեծամարմին տէրութեան մէջ եւ իրանց ժողովրդների բարօրութեան վերայ աշխատել: Այսպէս չը վարուեցան նորա: Զըբաւականանալով իրանց սեպհական թագաւորութեամբ, Վաղարշակի անմիջական յաջորդները նորանոր երկրներ աշխարհակալելու եւ առաջնակարգ պետութեան դերը խաղալու փառասիրութիւնն ունեցան՝ արեւմտեան Ասիայում Հայաստանն ամենահին ժամանակներից սկսած քաղաքականապէս այն ընդարձակ տէրութեան մի մասն էր կազմում: Որի թագաւորներն «արքայից արքայ» անունով հանդիսացան հետզհետէ Նինուէի, Բաբելոնի, Մարաստանի ու Պարսկաստանի ինքնակալները: Այս վարչական գրութիւնը հիմնուած էր մի տեսակ անկախ հպատակութեան վերայ, որ ընկերական սանդուղի ստորին աստիճանից սկսում եւ հասնում էր մինչեւ արքայից արքան: Արքայից արքան գահերիցութեան իրաւունք ունէր կամ ձգտում էր միշտ ունենալ միւս երկրներում իշխող թագաւորների վերայ, որոնք իրանց իշխանութեան տակ ունէին առանձին նահանգների վերայ տիրող սատրապներ, մեղանում նախարարները: Արշակունեաց օրով Հայաստանը բուն Պարթեւաց պետութիւնից յետոյ առաջին տեղն էր բռնում: Նորա իշխանութիւնը, ինչպէս յիշեցինք, տարածւում էր իւր բնական սահմաններից դուրս եղած երկրների ու թագաւորութիւնների վերայ: Այս դրութեամբ գոհ չը լինելով՝ Վաղարշակի երրորդ յաջորդը, Արտաշէս Ա. նախագահութեան պատուին ձգտեց հասնել եւ հասաւ էլ՝ Պարթեւաց թագաւորին պատերազմով ստորացնելով, որով եւ մի փառաւոր ապագայ պատրաստեց իւր որդու համար:

Այսպէս ուրեմն, Վաղարշակից յետոյ, երեսններին պիտի պատմն: Ին Տիգրան Բի գործերը, որի օրով Հայաստանն իւր

զօրութեան, մեծութեան ու յաջողութեան վերին ծայրը հասաւ, բայց եւ իւր անկման սկիզբը տեսաւ։ Սեւեւկիան տէրութեան կործանումը, Ասորոց ու Փիւնիկեցոց նուաճումը, Պաղեստինի յաղթական արշաւանքը—սորա են Տիգրանի երկարատեւ թագաւորութեան առաջին տարիներում կատարուած վառաւոր գործերը։ Այս յաջողութիւնների հետեւանքն այն եղաւ որ Ասիայի մեծ մասը Տիգրանին ճանաչեց իբրեւ թագաւորների թագաւոր, եւ շատ աղքեր հպատակութեան հարկ սկսան տալ նորան եւ նորա յաղթական բանակների մէջ ծառայել։ Կիլիկիայի եւ Կապադովկիայի Յոյները նորա մէկ կամքովը Միջագետքի դաշտերը փոխադրուեցան։ Վրանաքնակ Արաբացոց էլ ստիպեց իրանց սովորութիւնները թողնել եւ իւր մօտ բնակեցնելով՝ նոցա ձեռքով սկսաւ վաճառականութիւն անել։ Այդ ժամանակ Հայոց պալատում արեւելեան փարթամութեան հետ խառն իշխում էին յունական լեզուն ու սովորութիւնները։ յոյն դերասաններ արքունի թատրոնում իրանց ողբերգակների գեղեցիկ հատուածների հետ փոփոխակի ներկայացնում էին եւ Արտաւազդ արքայորդու յօրինած բանաստեղծական գորուածները։ Թագազուրկ իշխաններ ծառայում էին մեծ թագաւորին սեղանի ժամանակ։ չորս թագաւոր թիկնապահի պաշտօն էին վարում եւ երբ հայ Սեոստորը ձի էր նստում՝ կողքից գնում էին իսկ գահը նստած ժամանակն առաջը կանգնում էին։ Միհրդատի դաշնակցութիւնն աւելի լստահութիւն ու զօրութիւն էր տալիս Ասիայի վեհապետին։ կարծես ոչինչ արգելքի չը պիտի պատահէր նա իւր ճանապարհի վերայ, երբ Հռոմի հետ կպչելու զօրազուրկութիւնն ունեցաւ, որ իրան էլ իւր ահաւոր դաշնակցի զօրութիւնն էլ խորտակեց։

Միհրդատի Հռոմայեցոց հետ ունեցած երկարատեւ պատերազմների սկզբնապատճառը բացատրելուց յետոյ, Պոնտոսի թագաւորի գործերից միայն այն պիտի պատմուի աշակերտներին որ ուղղակի ազգային պատմութեան հետ յարաբերութիւն ունի։ Ընդհակառակն, Տիգրանա-

կերտի եւ Արտաշատի պատերազմներն միջնագէտները մանրամասնօրէն պիտի պատմուին, աշխատելով ցոյց տալ արեւմտեան քաղաքակրթութեան գերազանցութիւնը արեւելեան կրթութեան վերայ: Միհրդատի մահը եւ Տիգրանի իւր հարազատ որդուց դաւաճանուիլը Հայոց թագաւորին հարկագրեց հաշտութիւն անել Հռոմայեցոց հետ եւ Հայաստանից դուրս գրաւած երկրները նոցա ձեռքը թողնել: Բայց Տիգրան այն մարդը չէր որ այդպէս շուտ ընկճուէր: Նա շտապեց Պարթեւաց թագաւորի հետ բարեկամութեան դաշինք կապել, նախագահութիւնը յետ դարձնելով նորան եւ իւր ազօրիկը Պարսից արքայորդուն կնութեան տալով: Այնուհետեւ մի կատաղի պատերազմ սկսուեցաւ Ասորոց երկրում, որ փոփոխակի բաղադրով, բայց անելի Հայոց ու Պարթեւաց յաջողութեամբ, տեւեց մինչեւ Տիգրանի մահը: Սակայն այս պատերազմներից մի օգուտ չը կարողացաւ քաղել Հայոց երկիրը, այլ միայն իւր ոյժերը սպառեց: Տիգրան իւր յաջորդներին թողեց մի տկար ու աղքատացած տէրութիւն, որ շուտով Հռոմայեցոց ու Պարթեւաց ձեռքը խաղաղիկ պիտի դառնար:

Տիգրանից անմիջապէս պէտք է անցնել մի թագաւորի, որի բոլոր փառասիրութիւնը իւր ազգի բարօրութեան վերայ աշխատելու մէջ էր կայանում եւ որ հետեւապէս առաջինի հակապատկերն է ներկայացնում: այդ թագաւորն է Արտաշէս Բ:

Հեթանոս Արշակունեաց մէջ, Վաղարշակից յետոյ, չը կայ մէկը որ այնքան ժողովրդականութիւն վայելած լինի, որքան այս թագաւորը, որովհետեւ չը կայ մի ուրիշը—դանեա որչափ պատմութեան ցուցումներից կտրելի է եզրակացնել—որ իւր ազգի համար այնքան բան արած լինի, որքան այս ժողովրդասէր թագաւորը: Նորա պատմութիւնն անելիս՝ ուսուցչի նպատակը պիտի լինի ցոյց տալ երեխաներին, թէ ճշմարիտ մեծ մարդը նա է որ իւր գործունէութեամբ ձգտում է իւր ազգն երջանիկ անելու, եւ ոչ նա որ մի արտաքին փայլ, մի ժամանակաւոր մեծութիւն է տալիս իւր երկրին, եւ այս նպատակին հասնե-

լու բնական միջոցը պիտի լինի, ինչպէս միշտ այսպէս եւ այստեղ, — բուն իրողութիւնները խօսեցնել: Եթէ Արտաշէս Բի կենսագրութեան առաջին մասը, նորա մանկութիւնից սկսած մինչեւ հօր թագաւորութիւնը ձեռք բերելը, ուր Սանատրուկի որդին իբրեւ մի վիպապանելի պատանի է ներկայանում — շատ հետաքրքրական է երեխաների համար, նորա ազգօգուտ ձեռնարկութիւնները ոչ պակաս խրատական նշանակութիւն պիտի ունենան: Եւ յիշուի, Արտաշէսը իւր քառասնամեայ թագաւորութիւնն համարեա ամբողջապէս երկրի ներքին բարեկարգութեանն եւ ժողովրդի բարօրութեանը նուիրեց: Հայաստանի բոլոր գիւղերն ու ագարակներն անգամ օրոշ սահմաններով բաժանելով՝ թագաւորը օտար ազգերից բազմաթիւ գաղթականութիւններ բերեց եւ երկրի ամալի ու անբնակ տեղերում բնակեցրեց: Վաճառականութիւնն եւ արտոնեւորները ծաղկեցնելու հոգ տարաւ, կամուրջներ շինեց եւ բոլոր ծովակներն ու գետերը նաւերով լցրեց: Առանձին խնամք տարաւ երկրագործութիւնը ծաղկեցնելու, որ ազգային հարստութեան գլխաւոր աղբիւրն է, եւ ընդհանրապէս այնպիսի գործունէութիւն մտցրեց, Հայոց մէջ որ պատմութիւնն ասում է թէ՛ այս աշխարհաշէն թագաւորի օրով երկիր չէր մնացել որ անմշակ լինի, մարդ չէր մնացել որ դատարկ ու անգործ շրջի: Թողնում եմ յիշել քաղաքների ու մեհեանների շինութիւնը, մարդարանների հաստատութիւնը, շտաբների, ամիրների ու տարիների սեպհական հաշիւը պահելու սովորութիւնը, այն որ մինչեւ այն ժամանակ օտար ազգերի հաշուով էր լինում: Եւ այս բարերարութիւնների փոխարէն, ազգն աշխարհի երախտագիտութեամբ վարձատրեց իւր սիրելի թագաւորին, որին շատ քիչ թագաւորներ արժանացան, ազգային վիպապանները նորա կեանքի մանրամասն դէպքերն անմահացրին իրանց երգերի մէջ: Եւ իր օրով մէջ մէջ զմեզ մտնող Գալուստ արտաքին ձեռնարկութիւններին, Արտաշէս երկու յաջող պատերազմ ունեցաւ Սլանայ եւ Կասպից ժողովրդների հետ: Առաջին պատերազմի հետեւանքն

եղաւ Արտաշէսի ամուսնութիւնն Ալանայ թագաւորի դստեր հետ, որով իմաստուն թագաւորն իւր երկիրը այդ լեռնականների պարբերական ասպատակութիւններից ազատեց: Իսկ Հռոմայեցոյ հետ ունեցած յարաբերութիւնների պատմութիւնը կը հասկացնէ երեխաներին, որ այս շրջանի Հայոց թագաւորները ճանաչում էին կայսրների գերիշխանութիւնը, եւ որքան էլ կամենային, չէին կարող իրանց ազգակից Պարթեւաց հետ միանալ, որոնցից հռոմէական քաղաքականութիւնն եւ զէնքերը միշտ աշխատում էին հեռու պահել նոցա:

Սակայն Արտաշէս, յաջող իւր քաղաքակրթական ու պատերազմական ձեռնարկութիւնների մէջ, մեծ ձախորդութիւնների հանդիպեցաւ իւր մասնաւոր կեանքի մէջ: Սաթինիկ տիկնոջ ամուսնական հաւատարմութեան մէջ կասկածուիլը, Արտաւազդ արքայորդու անօրէնութիւնները, միւս որդոց հանած խռովութիւնները,—այս բոլորը թագաւորի տեսչութեան խաղաղութիւնը վրդովեցին եւ հօր ծերութիւնը գառն վշտերով լցրին: Արտաշէսի կեանքի այս կողմը կը հասկացնէ երեխաներին, թէ թագաւորներն էլ հասարակ մահկանացուների պէս զանազան դժբաղտութիւնների ենթակայ են: Այս պատմութեան մէջ չը պիտի մոռացուի Արտաշէսի տան բարերարն եւ Հայաստանի պահապան հրեշտակը—Սմբատ Բագրատունին, որ չը նայելով իւր կրած նախատինքին՝ վաղեց հայրենիքը վտանգից ազատելու, Հռոմայեցոց գէմ սլաոտերազմելով նոյն այն Արտաւազդի կողքին, որ սպարապետութիւնը խլել էր նորանից:

Արտաշէս իից յետոյ, մեր ծրագրով, պէտք է ուղղակի անցնիլ քրիստոնէութեան հաստատութեանը Հայոց մէջ: Բայց նիւթի ամբողջութեան համար՝ հարկ է փոքր ինչ յետ դառնալ եւ պատմել երեխաներին Աբգարի յարաբերութիւնը Փրկչի հետ, Թագէոս առաքելի քարոզութիւնները, անդրանիկ քրիստոնեայ թագաւորի դարձը իւր պալատականներով եւ մայրաքաղաքի բնակիչներով: Սակայն քրիստոնէութիւնը չը կարողացաւ արմատ գնել հեթանոս

Հայոց մէջ, որովհետեւ նոքա դեռ բաւական պատրաստութիւն չունէին Աւետարանի բարոյական սկզբունքներն ըմբռնելու. ուր մնաց որ նոր կրօնական շարժումն երկրի կենտրոնից դուրս՝ Միջագետքումն էր տեղի ունեցել: Նոյն իսկ Նզեսիայում՝ Աբգարի անմիջական յաջորդներն եկեղեցիները կործանեցին եւ մեհանները կրկին բաց տրին: Հեթանոսութիւնը վերահաստատուեցաւ իւր բոլոր զօրութեամբ եւ նորա առաջին զոհերն եղան Թադէոս ու Բարթոլոմէոս առաքեալները:

Թէեւ այս կերպով հին կրօնը դեռ էլի երեք դար տեւեց, բայց եւ այնպէս քրիստոնէութիւնը բոլորովին չ'անհետացաւ. Հայոց աշխարհից, այլ ծածուկ կերպով քարոզվում էր նորա՝ բնակիչներին: Հայոց թագաւորների հանած հալածանքները փոխանակ սակաւաւոր նորահաւատների սիրտը վհատեցնելու՝ աւելի եւս արծարծում էին նոցա եռանդը, եւ քրիստոնեաների թիւը հետզհետէ աճում էր: Նոր կրօնի հետեւողներն սկսան կամաց կամաց սարերից իջնել, ուր գաղտնի երկրպագութիւն էին մատուցանում Քրիստոսին, եւ աշկարայ քարոզել ժողովրդին ոչ միայն քաղաքներում ու գիւղերում, այլ մինչեւ իսկ թագաւորական արքունիքում իրանց ձայնը լսեցնելով: Այս բոլորը հարկ է պատմել աշակերտներին, որպէս զի նոքա հոսկանան թէ ինչպէս առաջին առաքեալների ցանած սերմերը հետզհետէ աճեցան ու պատրաստեցին ժողովրդին քրիստոնէութիւնն ընդունելու Հայաստանի երկրորդ Լուսաւորչի՝ Ս. Գրիգորի ձեռքով:

Այս մեծ մարդու ծնունդն ու սնունդը պատմելիս՝ ուսուցիչը չըպիտի մոռանայ յիշել Պարսկաստանի քաղաքական յեղափոխութիւնը, որի հետեւանքն եղաւ Սասանեան ցեղի նոյն երկրի գահի վերայ բարձրանալն ու Հայոց թագաւորութեան ժամանակաւոր բարձումը: Սորանով կը բացատրուի Տրդատ արքայորդու Հռոմ ապաւինելը եւ կայսրներից օգնութիւն գտնելը իւր հայրենի թագաւորութիւնը ձեռք բերելու եւ հասարակաց թշնամու դէմ պատերազմելու համար: Այնուհետեւ մի առ մի պիտի

պատմութիւն Հայոց դարձի մեծ դէպքերը. Ս. Գրիգորի կրած չարչարանքները Ոսկեմայր Անահտի տաճարի առաջ, նորա խոր—վիրապ ձգուիլը, Հռիփսիմեանց նահատակութիւնը, Լուսաւորչի ելը վիրապից, վկայարանների շինութիւնն 'ի պատիւ կոյսերի, Եջմիածնի հիմնարկութիւնը, Լուսաւորչի ձեռնագրութիւնը, Հայոց ազգովին մկրտուիլը, հին կարգերի ջնջումը եւ նորերի հաստատութիւնը: Տարօն գաւառի կրօնական պատերազմը, միակ դէպքը ուր հեթանոսութիւնը յայտնի դիմադրութիւն ցոյց տուեց քրիստոնէութեանը, յարմար առիթ է ներկայացնում ցոյց տալու ընդհանրապէս քրմութեան ունեցած դիրքն ու նշանակութիւնը հեթանոս Հայոց մէջ. քուրմերը կալուածատէր նախարարների պէս իրանց սեպհական երկրներն ու զօրքն ունէին եւ մեծամեծ հարստութիւնների տէր էին:

Ընդհանրապէս Լուսաւորչի գործունէութիւնն այնպէս պիտի պատմուի, որ երեւայ թէ նա, իբրեւ ճշմարիտ վերանորոգիչ, զգում էր իւր ձեռնարկութիւնն յաջողութեամբ գլուխ տանելու դժուարութիւններն եւ ըստ այնմ գործեց: Լաւ հասկանալով թէ ինչ մեծ զօրութիւն ունի մի ազգի համար դարեւոր ժամանակներից հաստատուած կրօնը, որի հետ պինդ կապուած էին նորա հասկացողութիւններն ու սովորութիւնները: Նա ամենեւին բռնի միջոցների չը դիմեց. այլ ինչպէս որ իւր բերանացի քարոզութիւնների մէջ աշխատեց մարդկանց մտքերի վերայ ներգործել եւ հին համոզումները համոզելով լիովնել, այսպէս եւ իւր ձեռնարկութիւնների մէջ մեղմ ընթացք բռնեց, խօսքի ու գործի մէջ կատարեալ ներդաշնակութիւն պահելով: Մեհեանները քանդելով եւ նոյն իսկ նոցա տեղերում եկեղեցիներ շինելով, երբեմն էլ մեհեանների վերայ լոկ խաչի նշան դնելով, ժողովորդը յօժարութեամբ պիտի դիմէր այս նոր աղօթատեղերը, որ առաջ էլ սրբավայրեր էին իւր համար: Դարձեալ քրիստոնէական նշանաւոր տօները հեթանոսական տօնի օրերում նշանակելով, նոր կրօնական ծէսերն ու արարողութիւններն անզգալի կերպով հների տեղը պիտի բռնէին: Վերջապէս

աշխարհական ու կրօնական իշխանաւորների մէջ նոր կարգերն արմատացնելու համար երկու կարգի քրիստոնէական գալոցներ հաստատեց. առաջինի մէջ կրթւում էին արքայորդիքը եւ նախարարների զաւակները, իսկ երկրորդների մէջ քուլմերի որդիքը: Վերջիններից յառաջագէտներին բաժանայ ձեռնագրեց ու երկրի մէջ ցրուեց քարոզութիւն անելու. միանգամայն նոցա գոհացնելու համար եկամուտներ նշանակեց նոցա եկեղեցուց ու ժողովրդից:

Հայոց դարձի պատմութեան մէջ Լուսաւորչի անունից անբաժան է Տրդատի անունը, որ ամէն բանում օգնական ու գործակից եղաւ Ս. Գրիգորին, ուստի եւ երկուսի կեանքը միասին պիտի պատմուի: Սակայն այս արգելք չը պիտի լինի ժամանակի քաղաքական դէպքերն առաջ բերել, որոնց մէջ թագաւորը խառն է գտնուել: Պատմութիւնը Տրդատին ներկայացնում է իբրեւ գերբնական ուժի տէր մի մարդ, քաջ ու անվեհեր պատերազմի դաշտում: Հեղ ու քաղցրաբարոյ խաղաղութեան ժամանակ, իւր հպատակների երջանկութեան վերայ հոգացող եւ նոցա սէրը վայելող թագաւոր. այսպէս պէտք է ներկայացնենք եւ մենք նորան: Ողիմպիական խաղերի մէջ ցոյց տուած զարմանալի ոյժն ու ճարպիկութիւնը եւ Հռոմէական բանակի մէջ գործած քաջութիւնները Տրդատի համբաւը նորանից առաջ բերել էին Հայաստան. իսկ Պարսից եւ Կովկասեան լեռնականների դէմ մղած յաղթական պատերազմներն այնպիսի մեծ տպաւորութիւն գործեցին ժամանակակիցների մոքի վերայ, որ նորա սխրագործութիւնները առակ էին դարձել ժողովրդի բերանում: Այս դէպքերը պատմելիս, Տրդատի անձնաւորութեան վերայ կատարեալ գաղափար տալու համար, չը պէտք է մոռացուին նորա հանած խիստ հրովարտակները քրիստոնէութեան դէմ, որ Ս. Գրիգորին ցոյց տուած անկեղծ գործակցութեան հետ՝ կը հասկացնեն թէ այս թագաւորը որքան սկզբումը ջերմեռանդ հեթանոս էր, նոյնքան էլ դարձ գալուց յետոյ բարեպաշտ քրիստոնեայ եղաւ: Լու-

սաւորչի մահից յետոյ նա շարունակեց մեծ Հայրապետի գործը՝ յորդորելով բոլորին քրիստոնէաւայել կեանք ունենալ. եւ երբ իշխանների կողմից դիմագրութիւն տեսաւ, թագաւորութիւնը թողեց եւ քաշուեցաւ Մանեայ այրը ճգնելու, ուր ապերախտ իշխանները թուհաւորեցին նորան:

Քրիստոնէութիւնը Լուսաւորչի ձեռքով հաստատուելուց յետոյ, նորա որդոց ու թոռներին մնում էր Աւետարանի սկզբունքները շօշափելի կերպով արգիւնաւորել: Այս կողմից առանձին ուշագրութեան արժանի է Ներսէս Մեծը, որ իւր զարմանալի գործունէութեամբ կարող է համեմատուիլ ամենամեծ թագաւորների հետ. ուստի եւ նորա վերայ պիտի կանգ առնէ ուսուցիչը: Ներսէսի մեծ նշանակութիւնը պարունակվում է գլխաւորապէս այն բարեգործական հաստատութիւնների մէջ, որոնք նպաստեցին աւետարանական քաղաքակրթութեան սկզբունքներն արմատացնելու Հայոց մէջ, այն էլ այնպիսի դժուար ու տագնապալից ժամանակներում, երբ Հայոց թագաւորներն իրանց պալատներում փակուած՝ ղեղխ ու անառակ կեանք էին վարում եւ երկրի արտաքին ու ներքին թշնամիները ձեռք ձեռքի տուած թագաւորութեան հիմունքը փորում էին: Բացի բաղմաթիւ վանքերից ու եկեղեցիներից, որոնց թիւը պատմագիրներն 2000-ի են հասցնում, Ներսէսը երկրի զանազան կողմերում աղքատանոցներ հիմնեց տնանկների համար, անկեղանոցներ ծերերի ու անկարների համար, որբանոցներ որբերի ու այրիների համար, հիւրանոցներ պանդուխտների ու ճանապարհորդների համար, եւ այս բոլոր հաստատութիւնների համար քաղաքներից ու գիւղերից եկամուտներ կապեց: Այս բեղմնաւոր գործունէութեան արգիւնքն այն եղաւ, որ Խորենացիու վկայութեամբ՝ Հայաստանը կարճ միջոցում բաղաքակրթ երկրի կերպարանքն ստացաւ:

(Իր շարունակութիւն)

Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ.

Սպենսէրն աւարտում է իւր գիրքը մանուկ սերնդի ֆիզիքական դաստիարակութեանը նուիրուած մի յօդուածով: Նա ծաղրում է իւր ազգակիցներին, ասելով, որ նոքա աւելի մեծ նշանակութիւն են տալիս անասուններին պարարտացնելու և տածելու խնդրին, քան թէ մանուկների դարմանութեան գործին: Գիւղացի ազնուականն ամէն օր այցելութիւն է անում ախոռներին ու գոմերին և լաւ գիտէ իւր կենդանիներին բուծանելու, խնամելու, առողջ և գեր պահելու միջոցները. բայց երբէք չէ պատահում, որ նա միանգամ մանուկների սենեակին էլ շնորհ բերէր և տեսներ, թէ ինչպէս է նոցա սնունդը, ժամանակի բաժանումը, օդի մաքրութիւնը և այլն: «Պտղամրուրի պարարիչ աղդեցութիւնը, խոտի և յարդի զանազան արժէքը, առվուտով (Trifolium) չափազանց փտելու վտանգը այնպիսի կէտեր են, որ սոցա մասին փոքր ի շատէ տեղեկութիւն ունի ամէն մի կալուածատէր և շինական. բայց սոցանից քանի՞ մարդ հետամուտ է իմանալու, թէ արդեօք մանուկներին տրուած սնունդը նոցա մարմնական պահանջներին յարմար է թէ ոչ:»

Նոյն կշտամբանքը հասնում է և քաղաքացիներին: Հեղինակի ասելով երեսուն քաղաքաքնակ անգլիացիներից հազիւ թէ գտնուի մէկը, որ չիմանար, թէ ձիուն կեր տալուց յետոյ նորան իսկոյն աշխատեցնելը լաւ չէ: Բայց այդ երեսնից—գնելով մինչև անգամ, որ ամէնքն էլ զաւակների տէր են—մէկին անգամ չէս գտնիլ, որ լաւ դիտած լինէր, թէ արդեօք որչափ է իւր մանուկների կերակրի և զբաղմունքի միջանկեալ ժամանակը: Սպենսէրը գանգատաւոր է, որ առողջ և գեղեցիկ մարդկային էակներ դաստիարակելու մեծ խնդիրը դեռ բանի տեղ չէ գրվում: Մանուկների սնունդը, հագուստը և պարապմունքը դեռ այն աստիճանի չնչին բան են համարուած, ասում է նա, որ ամէն մի մայր իրան ձեռնհաս է կարծում մի սնապաշտ դայեակի օգնութեամբ վերահսկելու նոցա վերայ, թէ և այդ մայրն օտար լեզուներ կոտրատելուց, դաշնամուր ածելուց և հագուել զգուելուց զատ է՛լ ոչինչ չիմանար. իսկ հայրը լրագիր ու գրքեր է կարդում, ժողովներ գնում, վէճեր վիճում իմանալու համար, թէ ո՞րն է մի մրցանակի խոճկոր (խողիճուտ) չաղացնելու ամենալաւ հնարը: Ամէն մարդ պատրաստ է քրտինք թափել մի սրընթաց նժոյգ մարզելու համար. բայց մի ուժեղ ըմբիշ (athlète) կրթելու մասին—և ոչ ոք:

*) Տես վարժարան № 4.

Մինչդեռ կեանքի մէջ առաջ գնալու համար մեզ ըմբռնող զօրութիւն է հարկաւոր և այս զօրութիւնը ազգային բարօրութեան առաջին պայմանն է: Պատերազմների արդիւնքը մեծ մասով կախուած է զինուորների մարմնական ուժից և ժրութիւնից. նոյնպէս էլ այժմեան կենսական նեղ հանգամանքների մէջ տնտեսական մարտի ելքը մասամբ արտադրիչների մարմնական կորուստով է որոշւում: Մեր ուժերը չափազանց լարւում են այսօր և հազարաւոր մարդիկ կործանւում են բեռի ծանրութեան տակ, որ ստիպուած են կրելու: Եւ եթէ այս բեռը գնալով առաւել ևս ծանրանայ, ինչպէս և պիտի լինի անշուշտ, այն ժամանակ ամենահոգեկոտ մարդիկն անգամ կը ճնշուին նորանից և կը բեկուկին: «Այս պատճառով մենք կուզէինք», ասում է Սպենսերը, «հէնց հիմակուց այնպէս յարգարուած տեսնել մանուկների դաստիարակութեան գործը, որ նոքա առաջիկայ պատերազմի համար ոչ թէ միայն մարմնով զրահաւորուած լինէին, այլ և մարմնով, եթէ ոչ անհնարին կը լինի նոցա դիմանալ լարուած ուժերի ճգնութեանը»:

Սնունդի մասին հեղինակի կարծիքով ոչ մեր նախնիների շատակերութիւնն օգտակար է, ոչ էլ նոր ժամանակի ժուժկալութիւնը: Սնունդին չափ ու սահման դնողը քաղցն է, և որովհետեւ սա է ամենալաւ առաջնորդը թէ կենդանիների, թէ ազգերի, թէ հիւանդ և թէ առողջ մարդկանց համար, ուստի մանուկների համար էլ լաւ առաջնորդ է: Այս պատճառով պէտք է, որ նոցա սնունդը քաղցի պահանջներին ենթարկուի:—Մանուկների վերայ նշմարուած սէրն անոյշ բաների համար, որ այնքան վախ է ազդում մեծերին, շատ բնական երևոյթ է: Ֆիզիօլոգը գիտէ, ասում է Սպենսերը, որ մարմնի մէջ շաքարը մեծ պաշտօն է կատարում: Ինչպէս որ շաքարն, այնպէս էլ իւղալի նիւթերը մարմնի մէջ թթուածնի հետ միանալով, տաքութիւն են առաջացնում: Անթիւ նիւթեր նախ քան ջերմութիւն տուող սնունդ դառնալով, պէտք է որ նախ շաքարի փոխարկուին, և այս շաքարացման գործը կատարւում է մարմնի մէջ: Ոչ թէ միայն նաշիհը շաքար է դառնում մարսողութեան միջոցին, հապա—Վլոդ Բեռնարի ասելով— շաքարի պահանջն այն աստիճանի մեծ է, որ կերակրի ուրիշ բաղադրեալ մասերից էլ շաքար է շինւում լեարդի մէջ, մինչև անգամ ազօտայիններից: Ուրեմն եթէ միացնենք մանուկների սաստիկ սէրն այդ պատուական ջերմատու սնունդի համար այն իրողութեան հետ, որ նոքա սովորաբար շատ պոքում են ճարպից (որ թթուահարութեան (oxidation) ժամանակ ամենաշատ տաքութիւն յարուցանողն է),—բաւականին հիմք կունենանք պնդելու, թէ մի կողմի աւելորդով լցւում է միւս կողմի պակասը—թէ կազմութիւնն այն պատճառով է աւելի շաքար պահանջում, որ ճարպին դիմանալ

կարող չէ։—Մանուկները սիրում են նաև պտուղներ և նոցա համար ամէն տեսակ մրգեղէն ճշմարիտ բերկրանք է։ Սորա պատճառն այն է, որ բուսական թթուները, հանքայինների նման, ամենալաւ կազդուրիչ միջոցներ են և մարսողութեանը շատ նպաստաւոր, մանաւանդ երբ որ աղիքը իրանց գործը արդէն բոլորովին աւարտած լինին։ Այս այսպէս լինելով, երեխաների մրգասիրութիւնն էլ յարգել պէտք է։

Կերակուրի որպիսութեան մասին շատերն այն կարծիքի են, որ մանուկներին բուսական սնունդը կենդանականից աւելի յարմար է։ Սպենսէրը սաստիկ մարտնչում է այդ կարծիքի դէմ և աշխատում է ցոյց տալ, որ փոքրերին աւելի սննդարար ուտելիք է հարկաւոր, քան թէ մեծերին։ Հասակաւոր մարդու մարմինն ամէն օր քիչ թէ շատ մաշվում է ջրերի շարժմամբ առաջ եկած վաստակութիւնից, ոգեկան զբաղմամբ ծագած յոգնութիւնից, կենսական պաշտօնը կատարելիս աղիքների կրած խոնջութիւնից և այլն, և պէտք է որ այս կերպով մաշուող հիւսուածները վերստին նորոգուին։ Նոցա մարմինը փնաս է կրում նոյնպէս և ամէն օր շատ ջերմութիւն դուրս թորելուց, և որովհետեւ կենսական գործունէութիւնը շարունակելու համար պէտք է պահպանել մարմնի ջերմութիւնը, այս պատճառով հարկաւոր է որ փնասը շարունակ փոխարինուի նոր ջերմագործութեամբ, որի համար էլ մարմնի որոշեալ մասերը միշտ այրման վիճակի մէջ են։ Այսպէս ուրեմն հասակաւոր մարդու սնունդն երկու պաշտօն ունի—նախ նորոգել մարմնի մաշումը և ապա նոր նիւթ մատակարարել ամէն օր սպառուող ջերմութեան փոխարէն։

Նոյնը պէտք է ասել և մանուկների մասին, այսինքն թէ նոցա մարմինն էլ սպառում է իւր նիւթը ամէնօրեայ ճգնութեամբ, և հերիք է դիտել նոցա անդուլ գործունէութիւնը, տեսնելու համար, որ նոքա էլ իրանց մարմնի մեծութեան նկատմամբ այնչափ ջերմութիւն են վատնում, որչափ և հասակաւորները, և թէ ուրեմն այս համեմատական չափով էլ նոքա սնունդի կարօտ են։

Բայց մարմինը նորոգելուց և ջերմութիւնը պահպանելուց զատ, մանուկը մի ուրիշ բան էլ ունի անելու—նա դեռ աճելու է։ Մաշման և ջերմասպառութեան փոխարէնը լրացուելուց յետոյ, եթէ մարմնի մէջ դեռ աւելորդ սնունդ մնայ, այս աւելորդը գործէածովում մարմնի շինութեան համար, և միայն այս աւելորդի շնորհով է առաջ գալիս նորա կանոնաւոր աճումը։ Թէ ո՞րքան սաստիկ է նիւթի հարկաւորութիւնն աճող մարմնի համար—տեսնում ենք աշակերտի քաղցի ուժգնութիւնից, որին էլ բնաւ կարող չէ հաւասար գալ յաջորդ տարիների քաղցը, և ապա նորա ախորժակի շուտ շուտ նորոգուելուց, եթէ մանուկներին աւելի

առատ և զօրեղ սնունդ տալու հարկն ապացուցանելու համար մի ուրիշ փաստ էլ պէտք լինէր, մենք կասէինք, որ նաւաբեկութեան կամ այլ պատահարի ժամանակ ծագող սովին ամէնից առաջ զոհ գնացողները նոքա են:

Երեխաների համեմատաբար աւելի առատ սնունդի պահանջը յագեցնելիս, Սպենսերի կարծիքով, պէտք է այնպիսի կերակուր տալ նոցա, որ շուտ մարսուէր և աւելի արձակ ժամանակ թողնէր աճելու և շարժելու համար:

Սնունդի ազդեցութիւնը մարդկանց վերայ ցոյց տալու համար Սպենսերն առաջ է բերում գետնախնձոր ուտող և միս ուտող դասակարգերի տարբերութիւնը ոգու և մարմնի զօրութեան, որպէս և գործելու կարողութեան նկատմամբ:—Զօրութիւնը կարող է առաջ դալ ոչնչից: Դաշտում արածող ձին թոյլ ջղեր կունենայ: Արօտը լաւ ճարակ է հրապարակում վաճառուելու զուարակի համար և վատ—որսորդական նժոյգի համար: «Արդէն վաղուց յայտնի է,» ասում է հեղինակը, «որ կուշտ միս ուտող անգլիացի գործաւորն աւելի բազմարդիւն է աշխատութեան մէջ, քան թէ միայն բուսական սնունդով ապրող ցամաքի գործաւորը:—այնքան բազմարդիւն, որ ցամաքի վերայ երկաթուղի շինող անգլիական ընկերութիւններն աւելի ձեռնտու են համարում հէնց իրանց հաշուով անգլիացի մշակներ տանել այնտեղ, որքան էլ այդ բանը թանկ նստէր, քան թէ տեղական մշակներ բանեցնել: Թէ նոցա աւելի արժանաւորութեան բուն պատճառը է՛ք թէ ցեղի, այլ սնունդի զանազանութեան մէջ է, յայտնի է և այն հանգամանքից, որ երբ սկսում են ցամաքի մշակներին էլ անգլիական ընկերները սնունդը տալ, նոքա էլ դառնում են գրեթէ վերջինների չափ արդիւնաւոր և տոկուն: Վեց ամիս բուսակերների վարդապետութեանը հետեւած լինելով, ես ինքս իմ յատուկ փորձով կարող եմ վկայել, որ մարդուս թէ մարմնի և թէ ոգու ոյժն և եռանդը թուլանում են միս չուտելուց:»

Երեխաների հագուստի մասին Սպենսերը նկատում է, որ նոցա թեթեւ հագցնելը վնասակար է: Իւր կարծիքը նա հիմնում է այն փաստի վերայ, որ մանուկը, նայելով իւր մակերևոյթի և կշռի փոփոխական յարաբերութեանը, աւելի ջերմութիւն է կորցնում, քան թէ հասակաւոր մարդը: Լէման ասում է, որ եթէ համեմատենք մանուկների կամ փոքրիկ անասունների մարմնի կշիռն և դուրս շնչած ածխաթթուի չափը հասակաւորների կշռի և արտաշնչած ածխաթթուի քանակութեան հետ, կըտեսնենք, որ մանուկները մեծերից գրեթէ երկու անգամ աւելի թթու են գոյացնում իրանց մէջ: Եւ որովհետեւ յայտնի է, որ դուրս շնչուած ածխաթթուի չափը ներսում գոյացող ջերմութեանը գրեթէ հա-

ւասար է, հետեւաբար դուրս է գալիս, որ մանուկներին մարմինը կարելի ունի համարեա թէ երկու անգամ աւելի ջերմութիւն գոյացնելու: Եթէ այս այսպէս է, ուրեմն յիմարութիւն է երեխաներին թեթեւ շոր հագցնելը: Կամբի խորհրդով պէտք չէ որ նոցա շորը միշտ միեւնոյնը լինի այլ պէտք է որ տեսակով և ստուարութեամբ ամէն մի դիպուածի յարմար գայ և պաշտպանէ մարմինը ցրտի տեւուն զգացմունքից, ո՛րքան էլ մեղմ լինէր այս զգացմունքը: Խեղդիչ և մղձկուտ տաքութիւն պատճառելու չափ հաստ թող չըլնի շորը, հապա միայն ցրտի ընդհանուր զգացմունքից պաշտպանելու հերիք: Բարակ բամբակից կամ կտաւից շինուելու փոխարէն, լաւ է որ նա շինուէր ջերմութիւնը վատ անցկացնող նիւթից, օրինակ—կոպիտ բուրդից, և այնքան բիրտ լինէր, որ մաշուելուց շատ փնաս չը կրէր, այնպէս էլ գոյն ունենար, որ դիմանար թէ անձրեւի թէ արեւի:

Խօսքի կարգը դալիս է այժմ երեխաների մարմնական հրահանգին, որի նշանակութիւնը, հեղինակի կարծիքով արդէն ամէնքն էլ լաւ հասկացել են (հայերը—հէ՛չ): Տղաների մարմինը բաւականին լաւ մարդկում է դպրոցների մէջ. բայց կարելի չէ նոյնը ասել և աղջիկների մասին: Սպենսերն առաջ է բերում իւր տնից ոչ հեռու գտնուած մի տղայոց վարժարան, ուր միշտ լինում են կանոնաւոր մարզմունք, և մի աղջիկների վարժարան նոյն իսկ թաղի մէջ, ուր մարզմունք բնաւ չեն լինում: Այս պատճառով նա հարցնում է, «Ուստի՞ է այս զանազանութիւնը: Մի՞թէ աղջկայ մարմնի կազմութիւնն այնքան տարբեր է տղայինից, որ նորան մարզմունք պէտք չէ. միթէ կայտառ խաղերի փափագը նորա՞ մէջ էլ այնքան զօրեղ չէ, ինչքան որ տղայի մէջ: Քիչ թէ շատ գիտենք, որ վարժուհիների ճաշակով անվայել է օրիորդներին ամուր, կոշտ և պինդ լինելը. որ բիրտ առողջութիւնն և ուժեղ ամրութիւնը ռամկային բաներ են. որ քնքշութիւն է հարկաւոր նոցա և միայն այնքան ոյժ, ինչքան որ պահանջվում է զօսանքի դուրս գալու համար, որ վերջապէս սակաւակեր, երկչոտ և թոյլ աղջիկներն աւելի դուրեկան են: Ի հարկէ այս բանը ոչ մի վարժուհի չէ խոստովանիլ, բայց և այնպէս մեզ թւում է թէ օրիորդների դպրոցները ձգտում են հէնց այդ տեսակ աղջիկներ կրթելու: Սակայն սխալ կը լինէր կարծել, որ տղամարդկանց ճաշակն էլ նոյնն է: Ճշմարիտ է որ նոքա մի առանձին սէր չեն զգում առնացի կանանց համար և մենք բոլորովին համաձայն ենք, որ նոցա սրտին աւելի հրապուրական է աւելի հզօր ուժի պաշտպանութեան կարօտ թուլութիւնը,—այնու ամենայնիւ տղամարդկանց բերմունքին համապատասխանող թուլութիւնն այն է, որ բնական է, ընդամենը է, որ կայ և կը մնայ իգական սեռի մէջ, և ո՛չ թէ

արուեստականը՝ որ զգուսելի է ամեն մի առողջ ճաշակի համար։

Բուն մարմնամարդութեան մասին Սպենսերն ասում է՝ թէ՛ այդ մարդութիւնը հարկաւ ոչնչից լաւ է՝ բայց չենք ընդունում, որ դա կարող լինէր խաղի պաշտօնը կատարել։ Դա երկու տեսակ թերութիւն ունի—դրական և բացասական։ Նախ ջղերի կանոնաւոր հրահանգն այնքան բազմատեսակ շարժմունքներ չէ առաջ բերում, ինչքան որ մանկական խաղը և չը տալով հաւասար գործունէութիւն մարմնի բոլոր մասերին, նա պէտքից աւելի է յոգնեցնում մի քանիսը, մինչդեռ միւսներն անգործ են մնում և այսպիսով գոյացնում է մի աններգաշնակ զարգացում։ Երկրորդ, այդ հրահանգները սակաւաթիւ, միակերպ, թերատ լինելով և իբրեւ կանոնաւոր դասեր իրարու յաջորդելով, վերջի վերջոյ եթէ ոչ բոլորովին զգուսելի, գէթ ձանձրալի են դառնում համբալիների համար։ Մրցութեան բարի նախանձը թէև ազդում է իբրեւ խթան, բայց այնպէս երկար չէ տևում, ինչպէս որ բազմադիմի շարժմունքներով հարուստ խաղի պատճառած զուարճութիւնը։ Սորանից զատ—և այս է մեր գլխաւոր ասելիքը—կանոնաւոր հրահանգները խաղից ստոր են ոչ թէ միայն ջղային շարժմունքների թւով, այլ նաև իրանց յատկութեամբ։ Արուեստական հրահանգների ազդած զուարճութեան բշտութիւնը, որ մեր կարծիքով նոցա շուտ ձանձրալի դառնալուն պատճառն է, պատճառ է նոյնպէս և նոցա սակաւ ազդեցութեանը մարմնի վերայ։ Շատ սխալ է այն սովորական կարծիքը, իբր թէ բոլորը մէկ է—զուարճարար են թէ ոչ մարմնի շարժմունքները, միայն թէ որոշեալ թւով կատարուէին։ Ախորժելի ոգեկան գրգիռը միշտ ժրութիւն է տալիս մարմնին։ Ո՛ւմ յայտնի չէ, թէ ինչ ազդեցութիւն ունի հիւանդի վերայ մի աւետարներ լուր կամ մի տենչալի բարեկամի այցելութիւն։ Ո՛ւմ յայտնի չէ զուարթ հասարակութեան մէջ գտնուելու օգուտն և կամ տեղափոխութեամբ առաջ բերուած բաւականութեան բարի և կազդուրիչ հետեանքը նոր ոտքի ելած հիւանդի առողջութեան համար։ Արձ առնք—խնդութեան զուարթ զգացմունքն առողջարար միջոցներից ամենազդուն է։ Փութացնելով արիւնի շրջանառութիւնը, նա հեշտացնում է բոլոր միւս կենսական պաշտօնների կատարումն և հետևարար օգնում է թէ՛ մեր ունեցած առողջութիւնն աւելացնելու և թէ՛ կորածը նորից ձարելու։ Խաղի մէջ զգացուած բերկրութիւնն և աղմկալի կայթիւնների զուգնեցած հաճոյքն այնքան օգտակար է մանուկներին, ինչքան և մարմնի շարժմունքները։ Բայց մարմնամարդութեան արուեստը կարող չէ տալ մանուկներին այդ բերկրութիւնն ու հաճոյքը, այդ ոգեկան զրդումն ու գրգիռը և սորա մէջ է նորա թերութիւնը։ Պնդում ենք, որ նա կարող չէ կատարել բնութեան սկահանջած շարժմունքների

պաշտօնն և կրկնում ենք, որ տղաների և աղջիկների քաջաոգ-
ջութեան համար ամենակարևորը խաղն է իւր զուարճութիւններով
և զբօսանքներով: Մանուկներին այս բաներից զրկելը նշանակում
է զրկել վերին իմաստութեամբ նոցա մարմնական աճման համար
սահմանուած միջոցներից:

Առաջ հեղինակը կարծում է եղել, թէ այժմեան սերունդը
հնից ուժեղ է. բայց չը նայելով որ այս օրուան մարդիկը նախնի-
ներից բարձրահասակ են և որ հիմակուան մեռնողների ցուցակը
կեանքի երկարումն է ցոյց տալիս, — նորա կարծիքը նոր սերնդի մար-
մնական կարողութեան մասին հիմնովին փոխուել է: «Բժիշկների
վկայելով», ասում է նա, «արդի սերունդը չէ կարողանում արիւն
թողնել տալ պապերի պէս. այժմ վաղահաս ճաղատութիւնը սո-
վորական բան է դարձել. ատամների թափուիլը սաստկացել է, մարմ-
նի զօրութիւնն սպառել է: Նախնիները չը նայելով իրանց անա-
ռակ կեանքին այժմեան զգուստ կեանք վարողներից աւելի տոկուն
էին: Թէև նոքա լաւ կոնծում էին, ժամերի կանոնաւոր բաժանու-
մը չունէին, թարմ օդի ինչ լինելը չը գիտէին, մաքրութեան մա-
սին էլ անհոգ էին, այնուամենայնիւ նոքա ծերութեան մէջ անգամ
կարողանում էին համբերել ամենածանր աշխատութեան: Մինչդեռ
մենք, որ այնքան զգուշաւոր ենք մեր մարմնի բարեկեցութեան մա-
սին, որ չափով ենք խմում, չափով ուտում, որ օդի մաքրութեան
մասին շատ զգուշաւոր ենք և մարմնի լուացումն էլ շուտ շուտ կտա-
րում ենք, որ ամեն տարի հանքային ջրեր ենք գնում և բժշկու-
թեան բարիքն էլ լիովին վայելում — մենք ամէն րոպէ մեր աշխա-
տութեան բեռի տակ ճնշուելու վտանգի մէջ ենք: Մենք որ առող-
ջապահութեան օրէնքներին այսչափ ուշադիր ենք, հէնց այդ օրէնք-
ները ոտնակոխ անող պապերից թոյլ ենք. իսկ աճող սերունդը —
սորա դէմքին և ախտերին նայելով — երեւի թէ մեզնից էլ թոյլ և
ապիկար կը լինի: Այս ցաւալի հանգամանքի պատճառը, հեղի-
նակի կարծիքով, պէտք է որոնել մտաւորական աշխատանքի չա-
փազանցութեան մէջ:

Նոր ժամանակս իւր երկաթուղիներով, հեռագիրներով և օր
ըստ օրէ սաստկացող մրցումով քանի գնայ աւելի ճգնութիւն է
պահանջում մեզանից, որպէս զի կարող լինինք դէմ դնել նոր
կեանքի նեղիչ պայմաններին: Այս պայմաններին համեմատ նոր
սերունդն էլ ստիպւում է աւելի շատ քրտինք թափել ուսման
վերայ, որով և մաշում է իւր մարմինը: Եւ եթէ աւելացնենք,
որ հայերի վաստակարեկ աշխատութեամբ քայքայուած կազմու-
թիւնն էլ ժառանգւում է զաւակներից, կը տեսնենք, որ քանի
պայմանները ծանրանան, այնքան էլ պիտի սպառուի նոր սերնդի
զօրութիւնը: «Ուր էլ գնայիր», ասում է Սպինոզերը, «միշտ կը

տեսնես անչափ աշխատանքից քիչ թէ շատ փաստուած աշակերտներ։ Ահա մէկն այնպէս թուլացել է, որ նորան խորհուրդ են տուել մի տարի ժամանակով գիւղ երթալ առողջութիւնը վերականգնելու համար. միւսի ուղեղի մէջ ամիսներէ ի վեր արիւն է հաւաքվում. երրորդը տանջվում է ջերմից, որ սաստիկ վրդովման հետեանք է. չորրորդն է մի երիտասարդ, որ ամէն անգամ ուշաթափ դուրս է տարվում դասարանից, և այլն։ Մենք չենք որոնել այս դէպքերը. այլ դոքա ինքեանք են դիպել մեր աչքին վերջին երկու տարուան ընթացքում այն էլ շատ սահմանափակ շրջանի մէջ։ Դեռ անցեալ տարի առիթ ունեցանք տեսնելու, թէ ինչպէս մօր ախտը զաւակներին էլ անցնում է։ Մի կին, որ առողջ և զօրեղ ծնողների դուստր է, այն աստիճանի փասուել է շոտլանդական վարժարանի վատ կարգերից, պակասաւոր սնունդից և անչափ աշխատանքից, որ ամէն առաւօտ գլուխը պտոյտ է գալիս. իսկ նորա զաւակները, մօր վատառողջ ուղեղը ժառանգած լինելով, չեն կարողանում դիմանալ մինչև անգամ մի թեթև մտաւորական զբաղմունքի առանց գլխացաւ կամ դալուկն զգալու։ Այժմ մեր առջև դրանվում է մի ուսումնաւարտ օրիորդ, որ դպրոցական դասերի պատճառած յոգնութիւնից և մարմնամարզութիւն չ'անելուց այնպէս հիւանդացել է, որ միշտ ցաւաբար պիտի մնայ։ Թոյլ և անկանոն ախորժակ, պժգումն մեղէն կերակրից, միշտ սառ անգամներ, տաք եղանակին անգամ մի թուլութիւն, որ միայն հանդարտ զրօսանքի ընդունակ է, այն էլ ամենակարճ ժամանակով, սրտի դող աստիճանների վերայ բարձրանալիս, շատ տկար տեսութիւն, խափանուած աճում, մեղկ ու լոյծ մարմին—ահա հետեանքը։ Գրեթէ նոյն փիճակի մէջ է և նորա դասընկերուհին, սա էլ այնպէս տկար է, որ բարեկամների հանդարտ մերձենալն անգամ նորան ուշաթափ լինելու չափ շփոթում է։

Համառօտելով Սպենսերի ասածները մարմնական դաստիարակութեան մասին, դուրս է գալիս, որ մեր օրերում դա վերջին աստիճանի թերի է։ Եւ թերութիւնը երևում է յատկապէս սնունդի սակաւութեան, հագուստի անբաւականութեան և մտքի սաստիկ ծանրաբեռնութեան մէջ։ Դպրոցական կարգերից երևում է, որ նոքա ընդհանրապէս աշխատում են ճնշել աշակերտին. նոցա պահանջը մեծ է, տուածը քիչ։ Մատաղ էակների վերայ այնքան ծանր և սարսափելի բեռն դնելով, վարժարանը նմանացնում է նոցա կեանքը հասակաւորների կեանքին։ Նա անտես է թողնում այն ճշմարտութիւնը, թէ ինչպէս որ սաղմն աճելու վերայ է գործածում իւր բոլոր կենսական զօրութիւնը, ինչպէս որ դիեցիկ մանուկը միայն աճման վերայ ծախսելով իւր ամէն ուժերը, ոգեկան գործունէութեան համար բնաւ ժամանակ չէ գտ-

նում—այնպէս էլ պատանին նախ և առաջ աճման պաշտօն է կատարում իւր հասակի մէջ, մի պաշտօն, որ ստիպում է շատ տալ աճող էակին և քիչ պահանջել նորանից, որ մարմնի և մտքի աշխատութեան չափն աճման ընթացքին նայելով է սահմանում ուրեմն և այն չափով է շատացնում ոգեկան և մարմնական գործունէութիւնը, որ չափով որ նուազում է աճումը:

Այս ծանրաբեռնիչ շատ պահանջող դաստիարակութիւնը մեր արդի քաղաքակրթութեան պտուղն է: Հին ժամանակներում երբ մարդկային կենսակցութեան գլխաւոր նպատակն յարձակուելն ու պաշտպանուելն էր, ամէն բանից աւելի արժէք ունեցողն էր մարմնի կորովը և ուզմի եռանդը, և ըստ այսմ դաստիարակութիւնն էլ գրեթէ միայն մարմնական էր: Ոգեկան կրթութիւնը ոչ թէ բանի տեղ չէր դրվում, այլ և նախատվում էր: Իսկ այժմ որ զղային զօրութիւնն ուրիշ բանի պէտք չէ գալիս, բայց թէ ձեռագործութեան, երբ ամէն մի յաջողութիւն գրեթէ միայն ոգեկան ուժից է կախուած, — դաստիարակութիւնն էլ դարձել է բոլորովին ոգեկան: Մարմինը կազդուրելու և ոգին արհամարհելու փոխանակ, ինչպէս որ անում էին առաջ, մենք այժմ բոլոր մեր ուշադրութիւնը միայն ոգուն ենք ընծայում, մարմինն անխնամ թողնելով: Բայց այս երկու ուղղութիւններն էլ սխալ են: Ոչ մարմինը պէտք է իջնաս հոգու զարգացնել, ոչ էլ ոգին ի վնաս մարմնի, այլ երկուքն էլ հաւասար չափով:

Երուցէ ոչինչ բան, ասում է Սպենսերը, «այնքան չէ նպաստել մի ձուլելու այդ երկու ուղղութիւնները, ինչքան որ այս համոզմունքի տարածուիլը, թէ առողջութեան պահպանութիւնը մարդուս պարտաւորութիւնն է: Կարելի է ասել, որ այստեղ մեր առջև մի տեսակ մարմնական բարոյականութիւն է դրուած: Այնու ամենայնիւ ամէն մարդ իրան ազատ է համարում բոլորովին կամայօրէն վարուելու իւր մարմնի հետ: Նոցա աչքում բնութեան օրէնքների դէմ մեղանչելուց առաջ եկած չարիքը միայն մի դժբախտ պատահար է, և ոչ նոցա շատ թէ քիչ անառակ կեանքի հետեանք, Թէպէտ և այս կերպով յաջորդ սերնդին հասնելու վնասն այնքան մեծ է, ինչքան որ նորա համար մեծ պիտի լինի այժմ գործուած ոճիրների չար հետեանքը: — Բայց և այնպէս հիմակուան մարդիկ ոճրագործ չեն համարում իրանց ապագայ սերնդի առջև: Ինչքան էլ արեցողութիւնը յանցանք համարուած լինի մարմնի նկատմամբ, սակայն դեռ ոչ դժ այնպիսի եղբարակութիւն չէ անում, թէ ուրեմն և ամէն մի մարմնական զանցառութիւն յանցանք է: Այո, ամէն մի խոտորումն առողջապահութեան օրէնքներից ֆիզիքական մեղք է: Քանի որ այս բանին ամէն տեղ պարտ ու պատշաճ ուշադրութիւն չընծայուի, դաստիարակութեան գործն էլ թերատ կը մնայ: Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ:

ՏՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄ ՆԱՐԱՆՆԵՐ*)

Վերագառնալով այժմ տնարարութեան ուսումնարանների, նկարագրութեանը, որը պրոֆ. Բօպպը հետեւեալ կերպով է սկսում — Մի ընտանիքի երջանիկ կացութեան գլխաւոր պայմաններից մէկը տանտիկնոջ տնարարութեան մէջ հմուտ եւ ճարպիկ լինելն է։ Տան տնտեսութեան մէջ արած սխալներն առ հասարակ շատ վնասակար ազդեցութիւն են ածում ամբողջ ընտանեկան կեանքի վերայ եւ շատ անգամ մի ընտանիք կործանւումէ տան լաւ կառավարել չիմանալու պատճառով։ Արդէն գիտուած փաստ է, որ ծնողական յարկի տակ (Վիւրտեմբերգի համար է խօսքը) այլեւս տանտիկիներ, տնարար կանայք հազիւ են պատրաստուում։ Մանաւանդ այդ զգալի է գիւղական կեանքում, որտեղ շատ բան կարող է փչանալ, եթէ տանը խոհեմ կառավարիչ չլինի։ Որ այստեղ միայն բարի ցանկութիւն ունենալը բաւական չէ, շատ անյաջող փորձերից յետոյ են համոզւում։ Այդ իսկ պատճառով հեռատես անձինք վաղուց այդ չարեաց դարմանն էին փնտռում։ Մասնաւորապէս Վիւրտեմբերգում 1879 թուից սկսած չորս գիւղական շրջաններ մասնաւոր տնարարութեան ուսումնարաններ են բացել լաւ տանտիկիներ պատրաստելու նպատակով, մի հինգերորդն էլ 1882 նոյեմբերին էր բացուելու։

Այդ տեսակ ուսումնարանների նպատակն է՝ գիւղացի եւ քաղաքացի հասուն աղջիկներին միջոց տալ այն հրմտութիւնները ձեռք բերել, որ կարեւոր են մի տուն լաւ կառավարելու, վարժեցնել նոցա մաքրասիրութեան, ճշտութեան, կարգ ու կանոնի, սիրտն եւ հոգին կրթել եւ, որքան ժամանակը ներումէ, ուսուցանել նոցա առողջապահութեան եւ հիւանդապահութեան սկզբունքները։

*) Տես Վարժարան № 4.

Այդ նպատակին հասնելու համար այդ տեսակ ուսումնարաններից հանում են այն, ինչոր աւելորդ է, եւ միւս կողմից այն բանովն են զբաղեցնում հիմնաւորապէս, ինչ որ սկիտանի է կնսքը մի տուն իրօք լաւ կառավարել գիտենալու համար: Հոգու եւ սրտի կրթութիւնը կրօնական սկզբունքի վերայ հիմնուած, այս է այդ տեսակ հաստատութեանց հոգին:

Աղջիկներին սովորեցնում են եւ վարժեցնում հետեւեալ բաների մէջ. 1. եփելը, հաց թխելը, լուսնալը, հարթկելը, հագուստ մաքրելը, կերակրեղէնների եւ զանազան պաշարեղէնների պահելը, գիւղացի աղջիկներին եւ կաթնային տնտեսութիւն, բանջարանոցի բոյսերի մշակութիւն, հաւ պահելը եւայլն. 2. ձեռագործից՝ հագուստ եւ ճեմակեղէն կարելը, ձեռքով եւ մեքենայով գուլբայ, եւ ուրիշ դորտ նման բաներ գործելը, կարկատելը, ապրանք ճանաչելը: Այդ առթիւ միջոց է տրվում, որ իրանց բաժինը մեծ մասամբ իրանք պատրաստեն: 3. լրացուցիչ առարկաներից՝ մասնաւորապէս հաշուապահութիւն, գեղագրութիւն եւ ուղղագրութիւն, մասնաւոր վարժեցնում են շարագրութիւն գրելու մէջ, մասնաւորապէս գործնական թղթեր գրելում, օրինակ՝ նամակագրութիւն, տնային հաշուապահութիւն եւայլն, վերջապէս ուսումնաւորող պահութեան եւ հիւանդապահութեան, քաղաքաւարութեան ձեւերի եւ երգ: Իսկ սիրտը կրթելու նպատակով տալիս են ընթերցանութեան համար նպատակայարմար գրքեր: Վարդապահութեան, մաքրասիրութեան եւ ճշտութեան վարժեցնելու նպատակով օրիորդները թէ գործի ժամանակ եւ թէ հանգստեան միջոցներում հսկողութեան տակ են գտնվում:

Ուսումը գլխաւորապէս գործնական է. օրիորդները եւ սովորեցնողներն ու հսկողներն ի միասին մի ընտանիք են կազմում եւ խմբերի բաժանուած, մի ուրիշ հերթով հոգում են խոհանոցի, լուացքի, կարի, սենեակներ մաքրելու եւայլ գործերը, ինչպէս եւ կաթնային տնտեսութիւնը, բանջարանոցի գործերը: Այդ ամէնն իրանք աղջիկներն իրանց

ձեռքով պէտք է շինեն տանտիկնոջ կամ տանմօր (Hausmutter) հսկողութեան եւ ղեկավարութեան ներքոյ: Միմիայն ամենակոպիտ եւ մեծ ժամանակ խլող գործերը (մանաւանդ երկրագործական) ուսումնարանի մշակներն են կատարում: Տան մայրն իրաւունք ունի մինչեւ անգամ աշակերտուհիների ազգականների ճերմակեղէնն եւս ուսումնարանում հարթիկ տալու, որ նոքա լաւ վարժուին այդ գործի մէջ:

Ամէն բանի, ինչպէս եւ յատկապէս կերակուրների ընտրութեան մէջ, ի նկատի են առնւում միմիայն մի բարեկարգ, մաքուր, բայց պարզ գիւղական կամ քաղաքային տան տնտեսութեան պահանջները:

Ուսումնարանի մէջ ուսուցանող անձինքն են՝ մի մայր կամ տանտիկին, որ գլխաւոր կառավարողն է եւ տնարարութեան ուսումն է աւանդում (Haushaltungskunde) եւ մի օգնական ուսուցչուհի գործնական պարապմանց համար (այդ երկուսն էլ՝ ի հարկէ ուսումնարանումն են բնակւում), մի քանի տեղական ուսուցիչներ եւ մի բժիշկ:

Իբրեւ հասարակաց հաստատութիւն ուսումնարանի ընդհանուր վերահսկողութիւնը պատկանում է տեսչին եւ նորան ընտրող մասնաժողովին կամ հոգաբարձութեան: Աշակերտուհիք ամէնքն ուսումնարանումն են բնակւում եւ սնունդի ու բնակութեան վարձ վճարում են օրական 40—50 կոպէկ (1 մարկ) եւ մօտ 26 մարկ (մօտ 12—13 ռուբլի) ուսման վճար ամբողջ ընթացքի համար, որ տեւում է 5—6 ամիս, ամառները մայիսից մինչեւ հոկտեմբերը եւ ձմեռը՝ նոյեմբերից մինչեւ ապրիլը: Ցանկացողը կարող է երկու ընթացքն էլ անցնել: Ամառները լինում են առհասարակ 15—20, իսկ ձմեռները 20—25 հոգիք: Աշակերտուհիք լինում են 17—25 տարեկան եւ առնուազն 16 տարեկան: Անկողնի գլխաւոր պիտոյքն ուսումնարանն է տալիս, իսկ ճերմակեղէնը, հագուստը հետերն են բերելու: Առանց թոյլտուութեան ուսումնարանից չեն կարող դուրս գնալ, յարաբերութեանց մէջ պահանջւում է խստիւ փոխադարձ յարգանք եւ հաշտ ու բարեկամական վար-

մօռնը: Սրն սկսվումէ եւ վերջանումէ ալօթքով: Ճաշից յետոյ կէս ժամ ազատ են: Ընթրիքի միջոցին փոփոխակի մէկը կամ կարգումէ, կամ երգումէ մի բան: յետոյ գործումեն գուլքա կամ մի ուրիշ բան: Թէ որ կարեւոր դէպք չըկայ՝ նամակագրութեան համար կիւրակի օրն է որոշուած:

Այդ տեսակ ուսումնարաններից կան Վիւրտեմբերգում չորսը: որոնցից առաջինը Նոուբերսհայմումն է բացուել եւ մի յարմարաւոր բնակարանի մէջն է գետեղուած. ղեկավար տան տիկինը մի քահանայի այրի է, նորան օգնումեն մի վարժուհի: տեղական ուսուցիչը եւ բժիշկը: Միմիայն լրացուցիչ դասերի համար, որ ուսուցիչն է աւանդում, առանձին հաստատ ժամեր են որոշուած: Այդպիսով ուսումնարանն ընդհանրապէս մի գերդաստանի կազմակերպութիւն ունի, որի անդամները տան մէջ պատահած հոգսերը փոփոխակի հոգումեն: Բժիշկը դաս է տալիս երբ ժամանակը ներումէ: Նորա տարեկան ընտանեկան ծախքը մօտ 1500 ռուբլի է, որը մեծ մասամբ աշակերտուհիներից ստացած թոշակովն է ծածկվում: Իսկ վարչութեան ծախքը մօտ 700 ռուբլի:

Այդպիսի մի հաստատութեան քննիչ տեսչի տեղեկագրից երեւումէ, որ հասարակութիւնը շատ մեծ հետաքրքրութեամբ ներկայ է գտնվում քննութեանը, եւ մասնագէտներին հրաւիրում քննելու տնարարութեան գործի մէջ. օրինակ. թէ ինչպէս են պատրաստում զանազան արգանակներ, խորովածներ, խմորեղէններ, քաղցրաւենիք, սեւ եւ սպիտակ հացը, եւ այլն, եւ ինչ պարագայք են հարկաւոր եւ ինչ չափով, նոյնպէս եւ կարից եւ ձեւից թէ տեսական եւ թէ գործնական քննութիւն եղաւ, աշակերտուհիք հանդիսականների առաջը մի քանի ճերմակեղէններ, ձեւեցին եւ կարեցին ձեռքով եւ կարի մեքենայով եւ այնպիսի արագութեամբ, որ ներկայ ելողները հիացել են: Բժիշկն այնպիսի հարցեր է առաջարկում առողջապահութիւնից, որ կարելի է գուշակել, թէ ժողովրդեան մէջ այդպիսով ամենակարեւոր առողջապահական հմտութիւններ կարող

են տարածուիլ: Իսկ ուսման պակասները լրացնելու համար (Fortbildungsunterricht) տեղական ուսուցիչը պարապել է մայրենի լեզուից, գրաւոր շարագրութիւններով գործնական թղթերի եւ հաշուապահութիւնով: Աշակերտուհիների գրած տետրներից երեւել է, թէ նոքա ինչպէս են գրում եւ հաշիւները պահում: Հաշիւներն իրանց ուսումնարանի ծախուց եւ մօից իրական պատկերն էին ներկայացնում: Տեղական բժիշկը դասեր էր տուել եւ բնական գիտութիւնից. օրինակ. թէյի, դահլէյի, կաթի, հացի եւայլն մասին: Տեղեկագիրը վերջանում է հետեւեալ խօսքերով. թէ եւ այդ տեսակ դասընթացներով ամէն մի աղջիկ կատարելապէս վարժուած չէ եւ ինքնուրոյնութեան չէ հասել տնարարութեան գործի մէջ, սակայն այնչափ տեղեկութիւն եւ հմտութիւն ստացած է, որ գիտէ թէ ինչպէս այդ ամէն բաները պէտք է հոգացուին: Ճշտութեան, կարգ ու կանոնի, մաքրութեան վարժուիլը քիչ բան չէ, եւ ոչ պակաս գին ունի այն հանգամանքը, որ նոքա բնագիտական ուսումն են ձեռք բերել սննդաւորութեան, եւայլն, առողջ եւ հիւանդ մարդու խնամատարութեան վերաբերութեամբ, ինչպէս եւայլն, որ ուսման պակասները լրացրել են: Այդ տեսակ ուսումնարանների փորձերը մինչեւ այսօր շատ յաջող են: Ով որ 'ի մօտոյ ուսումնասիրել է նոցա, վկայումէ, որ նոքա կատարելապէս ծառայում են իրանց նպատակին, այն է՝ ծանօթացնել աղջիկներին պարզ տնարարութեան կամ առտնին տնտեսութեան եւ նոցա ընդհանուր զարգացումը լրացնել այն չափով, որչափով որ հարկաւոր է մի գիւղացու կամ քաղաքացու աղջկան ընդհանրապէս:

Աշխատելով ծանօթացնել ընթերցողներին տնարարութեան ուսումնարանների նպատակին եւ կազմակերպութեանը, ինձ կըմնայ ցանկութիւն յայտնել եւ հրաւէր կարդալ բանալու այդ տեսակ օրիորդաց ուսումնարանների, որով հայ աղջիկներն այդպիսով կարող կըլինին իրանց կրթութեան այդ կարեւոր պակասորդը լրացնել: Ծախքերը եւ դժուարութիւններն առհասարակ մեծ չեն լինելու, բա-

ւական է եթէ համոզուենք որ կարելոր են եւ իրագործելի այդ տեսակ հաստատութիւնները: Պէտք է յուսալ, որ հայ կանանց յառաջագէժ մասը այս հարցում գործի գլուխ կ'անցնի եւ կարելոր ու մանրամասն հմտութիւնները ձեռք բերելով նոցա կազմակերպութեան վերաբերութեամբ գուցէ եւ գնալով եւ տեղն ու տեղը անձամբ ուսումնասիրելով այդպիսի մի օրինակելի հաստատութիւն, կամ իրանք ինքնուրոյնաբար գործ կըսկսեն, կամ կընպաստեն նոցա, որոնք գուցէ ցանկութիւն եւ միջոց կունենան այդպիսի մի բան իրագործելու: Ընդհանուր ուսուցչական ժողովն ապացուցեց մեզ, որ մեր մէջ էլ կան այդպիսի յառաջագէժ, անձնուէր եւ նախաձեռնութիւն ունեցող կանայք եւ օրիորդներ: Աւրեմն յուսանք:

Յ. ՉԻԳԻԱՆԵԱՆՑ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Պ. ԲԱՀԱԹՐԵԱՆԻՆ*)

ԻՒՐ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՄԱՐ:

«Բանի մանկավարժ ունիք ընդամէնը, — Ի հարկ է միայն մէկը, այն է պ. Մանդինեանը, որին մնում է միշտ պտտրատ ծառայութեան»

Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆԸ:

(Խօսք նոյն իսկ պ. Բահաթրեանի):

* Ես վախենում եմ որ պ. Բահաթրեանը չափազանցութեան է հասցնում իւր նուաստութիւնը՝ այսպիսի մեծ ծառայութիւն մատուցանելով ինձ: Ես չէի ուզենայ, որ ո՛վ և իցէ նորան

*) Թէեւ մեր սկզբունքներին միանգամայն հակառակ է տեղ տալ Վարժարանում այն տեսակ յօդուածներին, որոնցից անձնական կրքերի շունչ է փչում, այնուամենայնիւ այս անգամ իբրեւ բացառութիւն տպում ենք այս պատասխանը՝ յարգելով հեղինակին և յոյս ունինք մեր իրօք երկու յայտնի մանկավարժներից, որ նոքա անձնական պատուասիրութեան խնդիրները մէկ կողմ գնելով, ուղղակի գործի վերայ կը գրեն և մեզ էլ յարգելի ընթերցող հասարակութեան առաջ դժուար դրութեան մէջ չեն ձգիլ:

Խ. Բ.

այդքան նուաստ համարէ՛ր ինչպէս որ պ. Բաճաթրեանի երկիւղ-
ներից մի այդպիսի կասկած պարզ երևում է. և այն ժամանակ
գուցէ մեր վէճը աւելի քիչ մաղձով առաջանար, որ խնդրի պար
զութեան համար շատ կարևոր էր:— Իսկ խնդիրը՝ կը թուած իւն-
ն էր և է:

Թէ նորաբողբոջ «Վարժարանի» թերթերը խնայելով, թէ ըն-
թերցողների բարութիւնը չարութեամբ գործածելու յանդգնու-
թիւնը չ'առնելով, և թէ մանաւանդ նետերի անդօրութիւնը, բթու-
թիւնն ու մաշուած լինելը տեսնելով,—այս անգամ և ընդ միշտ
վեհանձն ներողամտութեամբ կը նայեմ պ. Բաճաթրեանի պատաս-
խանի ծաղիկների վերայ: Ես զգում եմ որ այդ պարոնին հար-
կաւոր է գոնէ մի բանով մխիթարուած լինել. նորա ինքնասիրու-
թիւնն այնքան վիրաւորուած է, որ մարգասիրութիւն չի լինիլ խել
նորանից այն մխիթարութիւնն, ինչ որ նա իւր համար մխիթարու-
թիւն է համարում: Ուրեմն, պ Բաճաթրեան, մենք վէճի է ա կ ա ն
մասը (ինչպէս լաւ եմ հասկանում Ձեզ) վերջացած համարենք,
այն է, թէ միայն Մանդինեանը չէ մանկավարժ, այլ և Դուք...
Բայց մի՞թէ ես այդ մասին կասկածելու ատիթ եմ տուել: Յոյս
ունիմ վերջը համոզել Ձեզ, թէ եթէ Ձեր մասին մի բան ասել
եմ այն չէ մի կասկած Ձեր մանկավարժ լինելու մասին:

Պ. Բաճաթրեանի պատասխանը կարդալով՝ ես յակամայս
յիշում եմ Թիֆլիսում գումարած Առաջին Ընդհանուր Ուսուց-
չական Ժողովը՝ ուր ես և պ. Բաճաթրեանն էլ ներկայ էինք:
(2ր վախճան, պ. Բաճաթրեան) Ձեր անձնաւորութիւնը կը խնա-
յեմ որքան որ դեռ էլի կարելի է): Այն լեզուն, որ պ. Բաճա-
թրեանը այժմ գործ է ածում այնտեղ չէինք լսում ոչ ոքից, ոչ
պ. Բաճաթրեանից և ոչ էլ ուրիշներից: Մեզ այնտեղ վէճեր
պակաս չէին, շատ քնքոյշ հարցեր շօշափեցինք, կամ մի՞թէ հա-
կառակորդներ քիչ կայինք...բայց և այնպէս ի՞նչ հիանալի
հանդէս էին ներկայացնում մեր նստերը, Մի՞թէ մենք այն ուսու-
ցիչներս չէինք, որոնք լրագրներում գէշ համբաւ են ստացել, թէ
այս մարդիկ դեռ չեն սովորել անձնականութիւնը մոռանալ և ար-
ծարժած խնդրի լուսաբանութեանը ձգտել: Եւ ի՞նչ դուրս եկաւ.
մենք ամէնքս հիացած մնացինք մեր այնքան ընտիր ոյժերը տեսնե-
լով և համոզուեցանք, թէ եթէ ուղենանք, կրկնում եմ, եթէ ու-
ղեն անք, ընդհանուր գործն ընդհանուր ուժով տանել կարող
ենք: Եւ այսպիսի հանդիսից յետոյ առաջին դասալիքը Դո՛ւք
պէտք է լինէիք, պ. Բաճաթրեան, Ձեր այդ աննման լեզուով, որ
մեր գրականութեան մէջ մի առանձին հերոսութիւն է համա-
րուած:

Դիմում եմ այն բոլոր պարոններին, որոնք Թիֆլիսից գնա-

ցին ցրուեցան տարածուեցան, իւրաքանչիւրը իւր տեղը, որոնք այն մեծ հանդէսը հիմնեցին՝ որի անմոռանալի յիշատակները մենք ամէնքս այս օր ունինք: չը քանդենք մեր գեղեցիկ սկզբնաւորութիւնը, հեռուից էլ նոյն և մի մեանք, քիչ մի զգաստութիւն ունենանք, երբ որ ընդհանուր գործն ենք շարժում և ուրացողին իւր վարձը տանք: հերիք է, որքան առաջներն անկարգութիւն տիրեց մեր մէջ:—

Ի՞նչ է իմ և պ. Բահաթրեանի վէճը. այս այն է, թէ արդեօք հայ մանուկը հայկական հէքիաթներով պէտք է կրթուի, թէ գերմանական հէքիաթներով: Այս հարցը խճճուեցաւ, բայց կ'աշխատեմ երկուսիս եղրակացութիւնները դէմ առ դէմ ներկայացնել, որոնք շատ պարզ են, թէ մեր հատ ու կտոր ասածներից և թէ մեր գործնական օրինակներից:

Պ. ԲԱՀԱԹՐԵԱՆԻ ՍԿԶԲՈՒՆԷ՝

ԵՍ ԱՍՈՒՄ ԵՄ՝

- 1) Հէքիաթների մէջ զուտ կերպով երևան է գալիս ազգային ոգին.
- 2) Ազգային ոգին պէտք է կամ կարելի է գերմանական հէքիաթներով աւանդել.
- 3) Եթէ բառերը հայկական են, գերմանական հէքիաթն էլ հայկական է դառնում:
- 4) Ազգային լեզուն այն է, որ ի մանանք իւր և իւր, մի օր և մի օր իրարից զանազանելը:

- 5) Մենք առհասարակ չ'ունինք ազգային հանճար, ուրեմն և ազգային ստեղծողութիւն.

- 1) Ոչ թէ ամենայն, այլ ազգային հէքիաթների մէջ միայն ազգային ոգի կայ.
- 2) Ո՛չ պէտք է և ո՛չ կարելի է այդ անել. գերմանականը միշտ գերմանական կը մնայ, և երբէք հայկական չի դառնայ.
- 3) Բառը միշտ մի ձայն, մի դատարկ հնչիւն կը մնայ. բառի հայկականութիւնը պէտք է ճանաչուի միայն ազգային բովանդակութեամբ.
- 4) Դոքա լեզուի պատահական բերմունքներ են, և եզուն իւր ազգային ոճերով, դարձուածներով, բառերի ընտրութիւն, ներով, արտայայտութեան ուժով և ազդուութեամբ է ճանաչուում. իսկ այս բաներում ժողովրդեան բերանն աւելի ապահով առաջնորդ է մեղ, քան անհատ հեղինակ, ների արտաքուստ կոկիկ արուեստը, իսկ ի ներքուստ օտարութիւններով լիք անհարապատութիւնը:
- 5) Այստեղ արդէն ապերախտութեան չափն անցնում է դէպի մեր ազգայինը, և կատարեալ մոլորացականութիւն է քարոզվում:

- 6) Մենք լաւ ազգային հէքիաթներ չ'ունինք
- 7) Սրուանձտեանի հէքիաթներն իմ քարոզած ազգայնութիւնը չ'ունին.
- 8) Աւարադցու, Թիֆլիսցու, Երեւանցու համար Սրուանձտեանի հէքիաթներն օտար են, իսկ Գրիմիներ ընտանի.
- 9) Վերջ ամենայնի՝ մենք Հայուն կարող ենք օտարի կրթութիւնը (աշխարհայեցութիւնը) տալ, և այդ օգուտ է.
- 6) Մինչև որ ձեր լաւին սպասենք, մենք զոր օր. Սրուանձտեանինը գործ կը դնենք, որովհետև մանուկը գլխներին կանգնած գիրք է ուզում. նորա համար իւր փուշը լաւ է, քան օտարի քաղցր պտուղները.
- 7) Ես աւելի վստահանում եմ իմ ճաշակի վերայ, մանաւանդ որ ինձ վկայ են մեր ընտիր բանաբանիչները՝ Հ. Ղ. Ալիշանը, Պալասանեանը, Մելիք-ղազէն, Տ. Աղեքսանդրեանը.
- 8) Ասենք, թէ տեղական հէքիաթների խնդիրն արդէն լուծուած համարուի, մի՞թէ այս աշառութիւն չէ՞, որ հայկական հէքիաթը Հայու համար աւելի օտար է համարվում, քան օտարինը:
- 9) Այս մասին Ձեզ հետ վիճել հնար չը կայ. գոցէ ուրեմն այս էլ օգտաւէտ համարէք, որ մեր ուսումնարանները փակենք և մեր մանկանց օտարի ուսումնարաններում կրթենք: Այս էլ ի հարկէ ճաշակի բան է:

Մի երկրորդ խնդիրը պ. Բահաթրեանի շօշափած բարոյականութիւնն է. նա ասում է, թէ Հայոց հէքիաթներն անբարոյական են, իսկ Գերմանացոց հէքիաթները—բարոյական. Մենք ի հարկէ նորա պէս անգթութեամբ մի ամբողջ ազգ չենք դատապարտի և չենք համարձակուի ասել, թէ Գերմանացիք անբարոյական են. եթէ նախ այս պարզ գաղափարն ընդունենք, թէ ամենայն ազգի տիպարը յայտնի չափով ճանաչվում է իւր ժողովրդական հէքիաթներում: Եւ մենք չենք ձգտի պ. Բահաթրեանի հրատարակած բոլոր հէքիաթները մի առ մի քննել, ինչպէս որ նա, շատ նեղսիրտ բժախնդրութեամբ մեր բոլորն իբր թէ քննել է: Այլ մի օրինակով ցոյց կը տանք, թէ ամենայն ազգ իւր բարքն ունենալով, իւր բարոյականութիւնը, ընկերական աշխարհավարութիւնն արտայայտում է իւր հէքիաթների մէջ. այսպէս են Գերմանացիները, այսպէս են Հայերը, և այսպէս են նոյն իսկ Հոտենտոտ վայրենիները, Ամենայն ազգիւր սովորական աչքով, իւր կազմած չափով է չափում բարոյական (ընկերավարական) արարմունք-

ները, նայելով թէ ինքը զարգացման ինչ աստիճանի վերայ է կանգնած: Բարոյականութեան մասին մեր այս տեսութիւնը, որ բոլորովին տարբեր է պ. Բաճաթեանի տեսութիւնից, մի օրինակով ներկայացնենք: Պ. Բաճաթեանի ձգձգած տկլորութիւնը (բժախնդրութիւններէց մէկը) պատահում է և հայկական և գերմանական հէքիաթներում և միայն այս պատճառով. կարծում եմ, ոչ մէկն և ոչ միւսն անբարոյական չը պէտք է կոչուի. բայց կայ մի ուրիշ հանգամանք, որ հարկաւ այդպիսի արժէդատութեան կ'ենթարկուի. երկու ազգի հէքիաթներն էլ աշխատում են իրանց հերոսների մերկութիւնը ծածկել, բայց որքան տարբեր կերպով. գերմանականը բնութիւնն է կոչում իրան գօնական, այսինքն անտառն և մթութիւնը, և սոցանով է ծածկում մերկութիւնը (deus ex machina), իսկ հայկականը շեշտում է ամօթխածութիւնը, կուսական նուրբ զգացումը, որ ի դէպ ասեմք ամենայն հասակին յատուկ է. (մինչև որ աղջիկը թագաւորին չը հեռացրեց և նորա շորերը չը հագաւ, նա ծառից չ'իջաւ և իւր երեսը նորան ցոյց չը տուեց, սորան կ'ասեն voluntaris): Ահա այժմ արդարեւ տեսնում ենք, որ հայկական տեսակետով՝ գերմանականն անբարոյական է, քան հայկականը. — Մենք էլ չենք շարունակիլ պ. Բաճաթեանի նեղ բարոյականութիւնները քննելու. Բաւական է ասել, թէ մեր հէքիաթներում ոչ թէ մերկութիւնն է աչքի ընկնում, այլ ամօթխածութիւնը մերկութեան պատճառով. Անխառն բարոյականութիւնը, ինչպէս և անխառն գեղարուեստը մերկութիւնից չէ վախենայ. պ. Բաճաթեան, Դուք, յոյս ունիմ, թանգարաններում եթէ կատարեալ արուեստ էք տեսնում, Ձեզ իսկապէս մերկութիւնը չի զբաղեցնում, ինչո՞ւ... Դուք ինքներդ գտէք պատասխանը. ես կ'աւելացնեմ, որ հէքիաթներն էլ ուղիղ այդ տպաւորութիւնն են գործում և այս ես փորձով եմ խօսում:

Մնաց մի երկու մանր բաներ յիշելու իբրեւ օրինակ. Ի՞նչ էր մեր sternthaler-ի քննութիւնը: — Մենք ամէնքս Յուդայ ասելով՝ ինքնին արծաթասէր ենք հասկանում. Աղէքսանդր ասելով՝ մեծ աշխարհակալ, երկինք ասելով՝ կապուտակ, արեգակ ասելով՝ դեղին... ասող ասելով՝ սպիտակ. Աւրեմն չ'ընդին ասող, չ'սպիտակ արեգակ՝ ասելը գաղափարների խառն շփոթութիւն է. Առաջ այսպիսի օրինակներ բերելով՝ ոչ թէ պ. Բաճաթեանի լեզուագիտութեան տկարութիւնն ուղեցանք հասկացնել, այլ մենք ուզում էինք ընթերցողի ուշադրութիւնն աւելի նշանաւոր բանի վերայ դարձնել, այն է՝ թէ եթէ այսպիսի ակնյայտնի անյարմարութիւններ են երևում թարգմանութեան մէջ, որքան աւելի ևս անյարմար կերպարանք պէտք է առնեն աւելի նուրբ

դարձուածները, որոնցից իւրաքանչիւրը միայն այս կամ այն ազգի յատկութիւններ են, ինչպէս և «Ոսկի աստղեր» պատմութեան մէջ մենք լաւ լաւ օրինակներին հանդիպեցանք. նոյնն անշուշտ հաստատուում է, եթէ մարդ ուշի ուշով կարդայ հայերէնի դարձրած Գրիմի առակներն ամբողջութեամբ: Պ. Բահաթրեանը մեր նկատողութիւններից միայն գտակ, վերարկու և պարեգօտ բաների անյարմարութիւնը մեզ հետ միասին խոստովանում է (փառք Աստուծոյ, գոնէ մի բանում համաձայն եղանք), «բայց» ասում է նա, չը կարողանալով գտնել ուրիշ բաներ, չուզեցինք գործ գնել օտարազգի բաներ: Մեր ասածն էլ հէնց այդ է, թէ այդպիսի չը կարողանալը օտարի հէքիաթներում անպագար դժուարութիւն պէտք է պատճառեն զուր աշխատող բանասիրին, որ իւր առաջ ազգայինն ունենալով՝ անհասկանալի պճնասիրութեամբ ուրիշի փետուրներով է ուզում զարգարուել, փետուրներով, որ ինչպէս էլ նայես իրան չեն յարմարում:

Պ. Բահաթրեանը շատ նեղացել է, թէ ինչո՞ւ նորա մասին ասում ենք, իբր թէ «այրից սկսում է և բեն ասելու կարողութիւն չունի»: Բայց մեր ասածը այլ էր, Մենք իրաւ է սրտի դառնութիւնից բացականչել ենք. «Քանի՞ մանկավարժներ ունինք, ինչո՞ւ այսպէս քամու ենք տալիս մեր ոյժերը... ինչո՞ւ... կարողութիւն չենք ցոյց տալիս, որպէս զի մի ընդհանուր շղթայակապ ուժով մի մեծ գործ կատարենք»: Ուրեմն պ. Բահաթրեանն էլ մեր ոյժերից է, թայց մեր գործին չի ծառայեցնում իւր ոյժերը, այլ քամու է տալիս: Ահա մեր յանցանքը այս է, և եթէ պ. Բահաթրեանը բողոքում է մեր դէմ, թող այդ դատէ անց յեղաշրջելու մեր միտքը, ինչպէս որ նա եղել է:

Շնորհակալ ենք պ. Բահաթրեանից, որ մի անգամ էլ առիթ տուեց մեզ այն ինդրի մասին խօսելու, որ բաւական պարզ է, բայց դեռ մերայնոց համար կարճես մի առեղծուած է:

Վերջացնում ենք, թող պ. Բահաթրեանը իւր պատրաստ ծառայութիւնը մեզ չը նուիրէ, այլ նորան, որին որ ծառայելու մենք ամենքս կոչուած ենք, այսպէս գուցէ աւելի գործ, քան կատակ արած կը լինինք:

Այս պատասխանը վերջինն է պ. Բահաթրեանին, եթէ իւր առաջին օրինակով ուզենայ շարունակել:

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ, Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 13 Декабря 1882 г.

Типография М. Варганянда и К. противъ Троиц. церк.